ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԳԻՐՔ ԳՈՂԹԱՆ ՉՈՐՐՈՐԴԻ ԳԱՐԱՆ

ԿԱԶՄԵՑ ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՀՆՈՒԹԻՒՆՔ

ՎԱՆՕՐԷԻՑ

ԳՈՂԹԱՆ ԳԱՒԱՌ

ԿԱԶՄԵՑ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ



ՀՈՐՈՐԴ ԳԻՐՔ

ԳԻՆԸ 10 ՐՈՒԲԼԻ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ԻՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1891

Ա IV/1

Սկզբ. 958

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅԱՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ· Տ· ՄԱԿԱՐԱՅ Ա·

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՄԱՅՈՒՔ

ՊԱՐՈՆ

ԿԱՐԱՊԵՏԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԵՋԵԱՆՑ

Յարգանօք եւ երախտագիտութեամբ նուիրում է

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Վայոց ձորում պատմական սրբավայրերից միմիայն մի վանքի նկար բաց թողեցինք մենք մեր երրորդ գրքից, այն է Հատինու հռչակաւոր վանքը, որ այժմ ամայի և աւեր է· թողնելով սորա նկարը և նորա մասին տեղեկութիւնը մի այլ անգամ և ուրիշ հատորի մէջ։

Այժմ անցնենք վայոց ձորի լեռնաշղթայն ու գողթէն գաւառը· և որովհետև մինչև գողթն գաւառը հասնելը անցնելու ենք Նախիջևանից· ուստի սորա մէջ գտնուածներն էլ ծանօթանալ յարմար ենք համարում։

Նախիջևանի մէջը չէ տեսնուում ոչ ինչ ազգային հնութիւն· միայն այստեղ քաղաքի հարաւային մասում Երեք խորաններ անունով մի եկեղեցի կայ վերջի ժամանակի շինութիւն, և սա այն նահատակների վրայ, որոց մասին յայսմաւուրքում յիշատակում է· և սորա տեղը այժմ մի գեղեցիկ շինութեամբ եկեղեցի է կառուցած, կան նախիջևանում մի քանի եկեղեցիներ։

Մայր եկեղեցին է Ս· Գէորգ, որ վերջի ժամանակներս կառուցուած է ինչպէս երևում է շինութեան արևելեան կողմում գտնուած հայ, ռուս և թուրքերէն արձանագրութիւնից, որ է (զայս տեղ յորոց «վերայ կառուցեալ է Ս· Գէորգ եկեղեցիս ընծայեաց կվարտի Պօլկովնիկ «քիլբալի խանն որդի զեներալ մայոր՝ Էկսանի խանի Նախիջևանցի 1869 ամի·)

Եկեղեցին գողտրիկ մի շինութիւն է թէ արտաքուստ և թէ ներքին կողմանէ։

Արևմտեան կողմումն է զանգակատունն, որ բաղկացած է երկյարկանի, բայց դեռ զմբեթը ծածկուած չէ, և կայ սորա աջ կողմում այս օրինակ արձանագրութիւն (ի հայրապետութեան հայոց Ս· Գէորգայ գ· ի հիմնեալ սուրբ Գէորգ եկեղեցիս աւարտեալի 1874 ամի արդեամբ ժողովրդոց Նախիջևան քաղաքի և օթնամեայ աշխատութեամբ մահտեսի Մկրտչի Թունեան· որ և կառոյց արդար վաստակաւք իւրովք զանգակատունս։)

Նոյնպէս այս յիշատակեալ անձն կառուցանում է իւր ծախիւրը, եկեղեցւոյ բակում արևմտեան կողմը ուսումնարանի շինութիւնը 1877 թուականին։

Այստեղից ճանապարհ ընկնենք դէպի Գողթն գաւառ· Գողթն կամ Գողթան գաւառ ինչպէս յայտնի է վասպուրական աշխարհի մի գաւառներից էր, զոր ինչպէս խոր· ասում է

«Գողթն ոամկօրէն ևս գողթն կամ գողթնայ գաւառ, է մի ի գաւառաց «վասպուրական աշխարհի մեծին Հայոց և է երկիր գինեւէտ և այգեւէտ ի մէջ

« գետոյն Երասխայ՝ և գաւառին Հարանդայ՝ որ է խափան։ Գլխաւոր աւան
« նորա կոչի ագուլիս որ ստուգաբանի այգեով լի։ Ունի գաւառն Գողթան
« և այլ աւանս մեծամեծս. զԱստապատ՝ զՓառակայ՝ զՓուսա (այժմ պիսա)
« զՀին Ջուղայ՝ զՇոռոթ (որ է շուրջուն)՝ զՈրդովատ—օրտուպատ՝ և զայլ
« ամրոցս և բերդս և գետս բազումս՝ որոյ նախարարութիւն յառաջ եկն
« ի Սիսակայ որդւոյ Գեղամայ Հայկազունոյ։ Անտի էր Ս. իշխանն Հայոց
« և վկայն Քրիստոսի Վահան որդի Խոսրովայ՝ ուստի կոչի Գողթնացի՝ որ
« նահատակեցաւ ի Թուականութեանս Հայոց ՃԶԷ. Խոր. Ա.

Ակենք Աստապատից՝ որ Նախիջևանից 8-9 վերստ ճանապարհ է՝ մօտ 200 տուն հայ բնակիչներ ունի. կանաչազարդ պարտիզներով և պտղատու ծառերով զարդարուած։

Հին Աստապատը սորանից $2\frac{1}{2}$ վերստ հեռու է Երասխ գետի ափին՝ սա ի հնումն բազմաշատ մի աւան է եղած Գողթան գաւառի՝ իսկ այժմ անմարդաբնակ է՝ միմիայն իւր եկեղեցին է երևում կիսակործան և աւերակ դրութեամբ։

Սա լայնանիստ՝ մեծ և հաստատուն շինութիւն է ընդարձակ գաւիթով՝ որոյ վրան զանգակատունն է եղած՝ որ այժմ խոնարհած է։

Գաւթի մէջ եկեղեցւոյ արևմտեան դուռը գեղեցիկ է իւր նկարով և իւր վրայ ապուցած խաչաքարերով՝ որոց շուրջը բոլորուած է պարանաձև մի նկարով տես 303 № նկար։

Գաւթի արտաքին դուռը ու եկեղեցւոյ հարաւային դուռը ծածկուած են հողակոյտերով։ Եկեղեցին այժմ ծառայում է իւր աւերութեամբը մօտակայ սահմանը պահպանող կողակների համար իբրև պահնորդատեղի՝ որ իւրեանց ձիաներով հանդերձ բնակուում են սորա գաւիթում։

Եկեղեցւոյ շինութեան մասին ոչ մի թուական չէ երևում՝ միայն արևմտեան դրան հիւսիսային կողմում գտնուած մի խաչի կողքին գրուած է այսպէս.

« Ս. խաչս յիշատակ է դարբին Գրիգորին կողակիցն մարիամին որդւոյն անդ-
« րեասին յովհաննէսին թվ ՌՃԵ։

Հարաւային կողմի մի խաչի վրայ էլ այս օրինակ

« (կամքն Ամենակալին և հոգւոյն սրբոյ ես մեղապարտ Պօղոս լոկ ան-
« ուամբ վարդապետս հիւրնկալ հոչակաւոր Սուրբ ուխտիս »)

Դրան վրայ սիրուն քանդակած նկար կայ՝ որ է տիրամօր պատկերը գրկում ունելով միածին Յիսուսը. սոցա առաջ ծնկաչոք մի ծերունի՝ որոյ գլխի վրայ հրեշտակը մի թագ ունի բռնած։

Եկեղեցւոյ արևելեան կողմից սկսած մինչև մի վերստ տարածութեան տեղ պարսպապատ շրջապատած է. պարիսպը ցիսաշաղաղ է և տեղ առ տեղ քան-

զուած, պարսպի ներսը շինութիւնների փլատակներ են երևում. տեղային Ծերունիներն աւանդութեամբ պատմում են, որ սա շինել է պարսից արքայորդի Աբաս միրզան Աստապատին տիրանալու ժամանակ, և ամրոցի ձև է առել սորան:

Այն պարսպի և եկեղեցւոյ ամբողջ բոլորտիքը լայն և խորը առու է բացուած, ինչպէս երևում է վտանգի ժամանակ առուի մէջ ջուր հաւաքելու համար Աբասից դեմից:

Այն եկեղեցւոյ կառուցման ճիշտ թուական չունենք, թէև արևմտեան դրան ներսի կողմը, կայ մի արձանագրութիւն, որ թուական է յիշում ՌՃԳ. և ասում է կանգնեցաւ սուրբ զդուռնս հրաշազան յօրինմամբ որ անուն սուրբ Վարդան զօրավարին ի վայելչութիւն և այլն և այլն . . . բայց ոչ թէ եկեղեցւոյ շինութեանը համար է:

Դիմելով Հ. Հախպատունեանցի գրութեան բ. հատորին, որ ասում է Այս տաճար կառուցեալ է յանուն սրբոյն « մեծին Վարգանայ զՄամիկոնեան զօրավարի՝ և աւանդութիւն է ընակ- « չացն վասն ստուգաբանութեան անունս Ա.ոդ.ոչ.ոդ. քանզի ասեն՝ թէ զկնի « նահատակութեանցն մեծին Վարդանայ և ընկերաց նորուն՝ բերեն այսր « զմարմինս նոցին. և այն ինչ պատանեն զայնս առ ի ամփոփել անդէն՝ երևե- « լիք ի բնակչացն Մակուայ գան և առնուն զայնս և տանեն ամփոփեն անդ « ի Մակու. և յօրէ անտի մնաց այս անուանակոչութիւն աստապատ՝ իբր « Ա.ոդ—պ.ոդ.ոչ. կամ ասա—տեղի—պատանելոյ մարմնոց սրբոց Վարդանանց՝ « նորին աղաղաւ և աւանդութիւն եկեղեցւոյս Ս. Վարդան՝ երես 302. պր. « 578՝

Մոկացի Պօղոս վարդապետն, Մելքիսէթ կաթուղիկոսի օրովգողթան գաւառում քարոզութեամբ շրջակայելով գալիս է այստեղ և նորոգում է եղած փոքրիկ եկեղեցին ինչպէս ասում է Ուռաքել պատմագիրը գլ. Ի գ. (. . . Եւ ըստ այսմ քարոզելով և զեկեղեցի շի- « նելով՝ եհաս մինչ ի գիւղաքաղաքն աստապատ՝ և նախ զնոցին վանքն շինեաց՝ « որ յանուն Ս. Ստեփաննոսի նախավկային է՝ ամուր պարսպիւ և երկաթա- « պատ դրամբ է *) և յետ աւարտմանց վանիցն՝ սկսաւ զգեղջն եկեղե- « ցին շինել ըստ թախանձանաց ժողովրդեան գեղջն. և վասն զի եկեղեցին « փոքր էր. և ոչ էր բաւական տանել զժողովուրդսն՝ զի բազում էր ժողո- « վուրդն. ընդ որոյ կամեցան ի խցերոյն. որք շուրջ զեկեղեցեաւն էին. « քակել և խառնել յեկեղեցին զի մեծասցի . . .) այս լինում է հայկական թուականի (ՌԾ.):

---

*) Կարմիր վանքի համար է ասում՝



ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ: ✻ ՕՐԻՆԱԿԵԼԸ ՄԱՐԳԵԼՈՒԱԾ Է:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԱՍՏԱՊԱՏՈՒ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ № 302

Էին Աստապատից Երասխ գետի ափով ճանապարհը տանում է մեզ կամիր վանքը, որ նոյնպէս գետեզրի մօտ կառուցած է կոփածոյ քարերով պարսպապատ. պարսպի չորս անկիւններում հաստատուն աշտարակներ ունի, երեք դուռն ունի արևելեան կողմից, մինը մեծ դարպասի դուռը, որ փակ է և անգործածելի:

Այս դրան վրայ կայ մի թուղթը բաց արծուի քանդակ, որ իւր մաքիներում մի խոյ է բռնած, սորա երկու կողքերին պատին ազուցած են խաչաքարեր, որոց մինին վրայ կարդացուում է յիշատակելով թուականը (թվ. ՌՃԾԴ. ին վերակացու յովհաննէս վարդապետի ծնողացն) այս մեծ դրան կողքին կայ մի այլ փոքրիկ դուռ ևս, քարերով ծածկուած է այժմ, միայն դրան ճակատի կիսաբոլոր քարի շուրջը կարդացուում է այս. (. . ակս պարսից արքայն Շահապասի ես Պաւղոս վարդապետ առաջնորդ և Միքայէլ ընկերքն « Աստապատեցի իմ քահանայք և ժողովուրդ նորոգեցին զպարիսպս զայս . .)

Սա այն Պօղոս վարդապետն է մոկացի, որ գողթան գաւառի ամենայն տեղերը եկեղեցիք շինեց. կան որ քայքայուած էին՝ նորոգեց, նոյնպէս և այս վանքը յանուն սրբոյն Ստեփաննոսի:

Նոյն շարքում մի դուռն ևս կայ, որ այժմ գործածելին է. այս դռնից ներս մտնելիս երևում է, փոքրիկ մի բակ, բակի մէջ տեղը բարձրում աստիճաններով բարձրանում է. Ս. Ստեփաննոս եկեղեցին:

Եկեղեցւոյ չորս բոլորտիքը շինութիւններ են պարսպին կպած, և են սոքա ուխտաւորների համար սենեակներ, հարաւային կողմի շինութիւններն են վանքի գոմատունը, ախոռը, հացատունը, մառանը, ամբարը. հիւսիսային կողմը գետի վրայ նայող բարձր սենեակները վանահօր կացարանն է. բոլոր այս շինութիւնները դանազան թուականների գործ են:

Եկեղեցւոյ շինութիւնը կազմուած է կարմիր սըրբատաշ քարերից, որոյ համար է և գուցէ, որ Կարմիր վանք են ասում, և ոմանք էլ «Սուրբ Խաչ» աստուածատին մօտ լինելուն համար:

Ունի սա սրածայր կամարակիր, արևմտեան կողմի միակ դրան վրայ զանգակատունն է, որ 1840 թուականի երկրաշարժից կործանուել է և խոնարհուել է ասրա գմբեթը, որ փոքրիկ մի ծախսով կարելի է նորոգել եթէ հետևող լինի. եկեղեցւոյ ներսը բաւականին պայծառ է, պատերը զարդարուած են նկարներով, կամարակիրի մէջ շուրջ բոլորտիքը նըկարներ կան մարդահասակ բարձրութեամբ, իւրաքանչիւր նկարի ներքև անուններն գրած է Ս. Գրիգոր լուսաւորիչ, Տրդատ թագաւոր, Սեղբեստրոս հայրապետ, Թէոդոս թագաւոր, Ս. Ներսէս, Սահակ պարթև, Աբգար թագաւոր, Կոստանդիանոս թագաւոր թիվով 8 հատ:

Ընայելով վանքի բաւական ունեցած եկամուտին, որ գոյանում է վարելահողերից և միշտ եկող ուխտաւորներից. զարմանալ երևում է, որ անխնամ է թողնուած սոյն վանքը. վանքի ոչ քայքայուած տեղերն են նորոգուում և ոչ մաքրութեան հոգ տանում. ինչպէս հաւատացնում էին վանքի ծառաները՝ եկեղեցւոյ մէջ անմաքրութիւնը տիրապետած է եղել. եթէ մենք տեսանք փոքր ինչ մաքուր, դա վերաբերում էին նորէկ՝ Սևանայ միաբան Վ. ահան վարդապետի ջանքին *):

Մասանց խորանում այցելողը տեսնում է մասանց անկանոն վիճակը. կան այստեղ երկու արծաթեայ աջեր և մի քանի խաչեր. մասունքներ, որոնց ամենքը վեր ընկած թափուած են մի տեղ, բոլորը ժանկոտուած, կարծես ոչ մի անգամ մաքրուելու համար ձեռք չէ առնուած:

(*) Այժմ վանահայր տարաշամբի նախակայ Ս. Ստեփանոս վանքի:

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀԱՄԱՐ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Խաչ. ж.-Лит. Е. Шаховскаго въ Тифлисѣ.

Էջմիածնի Փիլիսոփայարան

Կարմիր վանքից դէպի հիւսիս Երասխի ափով գալիս հասնում ենք Տարաշամբ գիւղի դէմը Տըղմուտ գետի բերանը, որ իւր պղտոր կարմիր գոյնովը գալիս խառնուում է պղտորելով նաև Երասխի պայծառ և մաքուր ջուրը. այստեղից հարկաւոր է անցնել սահմանը գետով ու դէմ ու դէմը գտնուած վերոյիշեալ 20 պարսկահայ տներից բաղկացած Տարաշամբ (շամբի) գիւղը, որ ի հնումն բազմամարդ է եղած 7—8 հարիւր տնով, որոնք գաղթել փախել են հեռագէտ ռուսաց հողը, և այժմ իրենց տեղ թողել են հին աւերակ տների փլատակները ու պատերի քարակոյտները: Այս գիւղը պատկանում է ինչպէս անցեալ ժամանակ և այժմ էլ Նախավկայ Ս. Ստեփաննոս վանքին:

Նախավկայ գնալու յարմար ճանապարհը այս լինելուն մեր ուղեցոյցը ձայն տուեց նոյն գիւղացւոց, որ իսկոյն լաստը անցկացրին մեր գտնուած եղերքը. գետի վրայ հաղորդակցութիւն այստեղ սոյն լաստով է լինում, և այս լաստն էլ պատկանում է Նախավկայի վանքին. (ինչպէս Աշոտ թագաւորի պարգեւագրի մէջ էլ յիշուած է, առաջ այստեղ նաւ է եղել բանելիս). լաստը գիւղացիք կապալաւ վերցրնում են վանքից, տարին 20 բուբլի տալով:

Գետն անցկենալով մտանք գիւղը, որ Տղմուտ և Երասխ գետերի միանալու անկիւնումն է: Այս տեղ կայ հնուց մնացեալ ցխաշաղաղ քար ու կիր եկեղեցի, պարսկական ձևի գմբեթով և է առանց արձանագրութեան. թէ և արարողութիւն և պատարագ մատուցանելու պարագայք կան և մի ձեռք էլ զգեստ ունի, բայց տարին հազիւ թէ մի անգամ պատարագ կատարուի, այն էլ գիւղացւոց շատ աղաչանօք ու ստիպմամբը և Նախավկայի վանահօր կամեցողութեամբը:

Տեղային սովորութեան համեմատ էշեր վարձելով մի սարսափելի ապառաժ և քարքարոտ ճանապարհով հասանք վանքը:

Նախավկայի վանքը տեղաւորուած է Մաղարդա լերան ցածրը մի ձորի կողքին բարձրադիր բլրաձև տեղոյ վրայ, բազմաշէն, անկանոն շինութիւններով ու աշտարակներով պատած:

Վանքի առաջ ցածրը՝ ծառաստանն է, որ բաղկացած է մեծ մասը թթենու, ընկուզենու, հացի, զարդաճի և մասամբ էլ ուռենու ծառերից. բայց ան-

խնամ է թողնուած, իսարկէ չՁրուելու պատճառաւ։

Վանքի պարսպի միակ դրան վրայ որ արևմտեան կողմիցն է, քանդակուած կայ Աստուածածնայ արձանը գրկին ունելով Յիսուս փրկիչը, որ ձախ ձեռամ աւետարան ունի բռնած։ Այն դռնից ներս մտնելիս մութն և ծուռը ճանապարհներ տանում են ձեզ վանքի բակը։ Այդտեղ կանգնելիս դուք տեսնում էք շինութեան ոչ ամբողջն, այլ հազիւ մի մասը, որովհետև դոնէ մի բաւականաչափ բակ չունի, որ շինութեան գեղեցկութիւնը ուղևորը տեսնելիս սքանչանայ։

Յիրաւի ճարտարարուեստ, հոյակապ և գեղեցկաքանդակ է եկեղեցւոյ շինութիւնը, վերուստ ի վայր նկարներով, քանդակներով, սիրուն փոքրիկ խաչերով, յիշատակարաններով զարդարած է։ Վերոյիշեալ մութը ճանապարհը տանում է ձեզ մի 5-6 արշընաչափ լայնութիւն ունեցող բակ արևմտեան կողմում։ Հիւսիսային կողմը մի ցածր նեղ ու երկար շինութիւն ունի հէնց կպած վանքի շինութեան և միւս կողմն էլ պարսպին։ սա ինչպէս ասում են Պօղոս և Պետրոս առաքելոց եկեղեցին է, կամարակապ և հինգ որմնափակ սիւների վրայ հաստատած, օրօրոցաձև է սորա շինութիւնը, այժմ մառանի տեղ է ծառայում։ բոլորովին կեղտոտ պահուած է ներսը։ սեղանի վէմ քարը միայն կայ։ բեմի վրայ վեր ընկած կան երկու տապանաքարեր, մինին վրայ հայ և վրացի տառերով գրուած է այսպէս։

«Այս տապան Թիֆլիսեցի արտեմ սիմոնիչ զօհրապովս, որ վախճանեաց «զկեանս յերիտասարդական հասակի իւրում խօլերայ ախտիւ ի 24 օգոստ։ «1866 ամի»։ Միւս քարի վրայ փոքրիկ մի դրուածք կայ այս օրինակ։

«Ողջոյն քեզ տապան, տուն իմ իսկական, մինչև յաւիտեան, գալուստ «մարգարէան, ատատատ գեղջ բնական թվ. 1875։ Սոքա ինչու են այստեղ ընկած մեզ անյայտ մնաց։ կան նաև այստեղ յատակի վրայ կորդաւ 6 հատ տապանաքարեր, որոց երկուսին վրայ կար միայն արձանագրութիւն, այն ևս շատ մաշուած և տեղ տեղ եղծուած լինելուն չկարողացանք դուրս բերել, միայն նկատելի են այդ ամենի վրայ հովուական գաւազանների փորուածքները։ երևի վանքիս առաջնորդների տապանաքարերն են։

Այժմ ինչպէս տեսանք Նախավկայի հիւսիսային կողմը անցք չունի, փակ է այն Պօղոս Պետրոս եկեղեցւոյ շինութեան պատճառով։

ԼՍԵԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՌՆԱՍ ԴԱՀԱՆ
ԱՐՄԵՆԻԱՅԻ



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

ստի սկսենք արևմտեան կողմից գնեելով երեք կողմը մեն գալ, դուք կտեսնէք արևմտեան միակ դրան վրայի և կողքերի՝ պարսկական ճաշակով շինուածքը, որոյ ամենայն տեղը խաչերով և յիշատակարաններով ծածկուած է. № 291 նկարը. դրան ճակատին կիսաբոլորակ մի քարի վրայ պարսկական տառերով ընդարձակ արձանագրութիւն ունի, որ Շահ-ազատպահանի որդի թագաժառանգ Աղպաս միրզայի անունն է կրում, որ օգնել է Հայոց Եփրեմ կաթուղիկոսի օրով. և Շամբի (այժմ մեր տեսած տարաշամբ գիւղն) աբքունական հարկը վանքիս է յատկացնում փրկչ. 1831 թվ:

Սորա ներքև հայերէն արձանագրութիւնն է այսպէս. կամՔ և ողորմութեամբն աստուծոյ Նորոգեաց սրբոյն Սահմանոս «Նախավկայի եկեղեցոյս յարևմտեան կողմ ես . . . Նախիջևանցի . . յի-«շատակ իւր և կողակցուն Մարիամին և ծնողացն Աղաջանին և Նանագու-«լին թվ. ՌՃԾԳ։ «

Սոցանից վայր դրան երկու կողքին աջ ու ձախ կան նոյնպէս ընդարձակ արձանագրութիւններ. աջակողմեանն է 1827 թվին, որ յիշատակում է Սարգիս առաջնորդի միջոցաւ վանքիս նորոգութեան ժամանակ օգնող մի քանի անձանց անունները. որք, կիր և այլ իրերը իրենց ծախսով բերել հասուցել են Աղուլիսից, Նախիջևանից և այլ տեղերից մինչ այս տեղ:

Ձախակողմեան արձանագրութիւնն էլ է այս օրինակ:

1831 թվ. իշխանութեան տեառն Եփրեմի	Ի սոյն ժամու զիմ նուաստի
Կաթուղիկոս Հայոց ազգի	Սարգիս վանացս առաջնորդի
Պարսից ազգի ինչնակալի	Որ եմ տեղեաս Մաքեցի
Շահպապահան մեծ արքայի	Այժմ կոչիմ Ջուղայեցի
Որդւոյ Նորին Աղպաս միրզի	Զգիւղն Շամբա գնեցի
Երկրիս մերոյ միշտ իշխողի	Երեք հարիւր թուման փողի
Ռուսաց մեծի ինքնակալի	Զայսքան դրամն ժողովեցի
Նիքոլա Պաւլովիչի	Ընկերութեամբ իմ որդեկի
	Օհաննէսի վարդապետի

Որ է տեղեաւ իսկ Շամբեցի
Յերկրին Սիւնեաց և Շարուրայ
Դարաշագեաղ և Աղուլեայ
Նախիջևան իսկ ընդ Նոսա
Տէր պահէ շէնս այժմ և ապայ
Վերոյիշեալ Աղպաս միրզայն
Հրամարտակաւ արքայական
Զ-Հարկն Շամիրա արքունական
Շնորհեաց մեզ յայտ յանդիման
Զկնի իմ առաջնորդ ոք
Իշխան կամ միաբան ոք
Վասն թեթև ինչ պատճառի
Ինքնագլուխ կամ խրոմի

Թէ վաճառել զայս գիւղս կամի
Ա,յնպիսի այրն ընկեր լիցի
Յիրավաճառ չար Յուդայի
Անիծանօք կապեալ լիցի
Եւ սևերես երևեսցի
Յաւուր մեծի դատաստանի
Ի միաբան տանս մեծի
Ստեփաննոս վարդապետի
Դանիէլ և Գաբրիէլի
Սրբակենցաղ աբեղայի
Ծառայ գրչիս
Պետրոս դպիր Շամբեցի։

Ինչպէս յիշեցինք այն արձանագրութիւնները և դուռը տեղաւորուած է մի կիսագմբեթի մէջ, որոյ մէջը և դուրսը գեղեցիկ քանդակագործութիւն ունի պարսկական ճաշակով № 291 նկար)։ Այս կիսագմբեթից վերև շինութեան վերին ծայրում քանդակուած կայ մի սիրուն շրջանակի մէջ Քրիստոսի խաչելութեան պատկերը, երկու կողքին կանգնած են Մարիամ աստուածածին և միւս Մարիամը։

Դատնանք այժմ հարաւային կողմը, ուր հոյակապ և վայելուչ ձևով զանգակատունն է կանգնած, կից մի կողմը եկեղեցոյ շինութեան և միւս կողմը վանքի պարսպին։

Այն զանգակատան ներքին յարկում կամարի տակ եկեղեցոյ հարաւային պատի վրայ Մարիամ Աստուածածնայ պատկերն է քանդակուած գիրկը Յիսուս մանուկը ու նստած գահի վրայ։ Իսկ վերին կամարի տակ միևնոյն կողմում նոյնպէս շրջանակի մէջ տեղաւորուած է աւետումն Ս. կուսի քանդակագործ նուրբ նկարը։ Եկեղեցոյ այս կողմի պատն էլ զարդարուած է խաչերով, յիշատակարաններով։

Որոնց մի առ մի գնելէ յետոյ։ զանգակատան միջով անցնենք արևելեան կողմը։ բայց ի՞նչ գեղեցիկ է մէջ տեղ գտնուած խաչաձև լուսամուտը, որոյ վրայ գտնուած քանդակը մի սիրուն շրջանակի մէջ Ս. Ստեփաննոսի քարկոծումն է ներկայացնում, տես № 292 նկար)։ Ինքը Ս. Ստեփաննոս բուրվարը

ձեռին ծնկաչոք աղօթելիս, իւր շուրջը գտնող պիղծ ձեռքերից քարկոծուում է, վերևը ձախ կողմից հրեշտակը թագ ի ձեռին իբրև երկնային պսակ շնորհում է, և այս կատարուում է արարչի, Հօր, Հոգւոյն սրբոյ և Որդւոյ միածնի ներկայութեամբ, որ նկարիս վերև աջ կողմում բազմած է։

Սոցանից վերև շինութեան բարձրում թեևերը բաց արած արծիւն է իւր մաքիներում մի խոյ բռնած. իսկ շինութեանս հիւսիսային վերին ծայրում, նման սոյն քանդակների կայ Ս. յարութեան պատկերը, այս կողմի նկարները տեսնելիս նշմարուում է, որ կողքի ցածր շինութիւն Պօղոս Պետրոս եկեղեցին Նախավկայից յետոյ է շինուած, որովհետև սոյն պատի վրայ մէջ տեղում եղած նկարների և քանդակների կեսերը նոյն շինութեան տակն է մնացել, իսկ միւս կեսերն երևում են։

Նախավկայի սիրուն լայնանիստ, բազմաքանդակ կամարուղիկէն շատ հիանալի է, գմբեթը ճաճանչաւոր շառաւիղաձև ծածկոցով ծածկուած է, մէն մի շառաւիղների ծայրին քարեայ փոքրիկ խաչ կանգնեցրած, ծածքից ցածր կամարուղիկէի պատի վրայ շուրջանակի մարմարեա քարերի վրայ քանդակեալ փոքրիկ խաչաքարեր են ադուցած թւով 24 հատ. կողքերին վեցթևեան քերովբեների արձաններով. սոցանից ներքև առաքելոց և աւետարանչաց քանդակագործ պատկերները. իրաքանչիւրի ներքև գրուած անունները, Անդրէաս, Փիլիպոս, Բառնաբաս ևն. յետոյ վայելչաձև լուսամուտները, որոց բոլորտիքը կամարաձև սիւնանման գեղաճաշակ զարդարանքով վերջանում է։

Երևելեան կողմի բակն էլ նեղ է և շինութիւններ է կառուցուած, որոց ներքին յարկը անասնանոցն է, իսկ վերին յարկը արդէն քայքայուած. վանքիս ամբողջ շինութիւնը կազմուած է կարմիր և դեղին սրբատաշ մաքուր քարերից:

Եկեղեցւոյ ներքին կողմը, պատերը, առաստաղը, կամարները, կամուղեկէի մէջը, բոլոր տեղերը հատարակ դեղով զարդարանք է տրուած, նաև զարդարուած են պատերը մեծ մեծ իւղանկար եկեղեցական պատկերներով, ներքին ձևը բոլորակի խաչաձև է, ունի երեք պատարագամատոյց սեղան, մինը աւագ սեղանն է, որ չորս առանձնակի սիւների վերայ առանձին կամուղեկէի ձև ունի, սոյն ձևով են նաև միւս երկուսն, որ գտնուում են աւագ դասից դուրս ժողովրդոց կանգնելու մասում, եկեղեցւոյ աջ և ձախ կողմերում:

Աւագ սեղանի երկու կողքերին մի մի աւանդատուն կայ մինը մասանց խորանն է համարուում. ուր բացի Ս. Ստեփաննոսի մասունքից գտնուում են նաև հետևեալներն. Հռիփսիմէ կուսի մասունքը, Անդրէի առաքելոյն, Թադէոս առաքելոյն, Ս. Կարապետի, աջ Ս. Ստեփաննոսի, աջ Ս. Գ. լուսաւորչի, գաղաթ Ղուկաս աւետարանչի, և այլ շատերը. թվով 14:

Այս տեղ կան անկարգ և անխնամ թափ տուած թէ տպեալ և թէ մագաղաթի վրայ ձեռագիր գրքեանք, աւետարան, Յիսուս որդի, և այլն. բոլորը եկեղեցական բովանդակութեամբ, նաև հին՝ Պարսկաց և Հայ թագաւորական ձեռագիր հրովարտակներ, պարգևագրեր, որոնք արժանի են միմիայն Էջմիածնայ մատենադարանումն գտնուելու, որով ազատուած կլինին ներկայ անխնամ վիճակից, որովհետև բորբոսնելով փչանալու են: Դժբաղդաբար այստեղ է և վանահօր մառանը:



Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

Գկեղեցւոյ արևմտեան երկու անկիւններում մի մի պահարաններ կան, որոց մինին մէջ մի հին մարմարեայ տապանաքար կայ, որոյ արձանագրութիւնն է, «Թվին Ռ.Ղ. երկի հիմնարկութեամբ այսմ տաճարիս «Նշխարքս յայանի ձեռամբ Յակոբ վարդապետի որ յետ իններեակ եռակ «ամի կաթուղիկոս Հայոց լինի, դարձեալ ի տեղւոջս ամփոփի. Ռ.ՃԵ. «Թվին.»։

Այս պահարանը ամուլ, անծիններին համար մեծ ուխտատեղի է. Թուրքը, Հայը, գալիս են այստեղ հաւատով, մարդ ու կին երկու ընկեր, նախքան պահարանը մտնելիս՝ կնոջ հանդերձի քղանցքը պահարանի սէմի վրայ մի միով միսելից յետոյ, ուժով քաշում պատռում են, և ապա ներս մտնում մոմ վառում նոյն տապանաքարի վրայ, աղօթելով ու ջերմեռանդութեամբ համբուրում։

Անկանատես անձինք և շատերը հաւատացնում են, որ այս միջոցաւ ծնում են անոնք, որք տարիների ընթացքում անղաւակ են մնացած. մէս պահարանում էլ վանքի ունեցած տեղաշորերը դարսուած են. այս երկու պահարանների դէմ ու դէմը փոքրիկ դռներ կան, որ սանդուղներով տանում են փոքրիկ վերնատունը։

Այս է Նախամկայի ներքին և արտաքին տեսքը. իսկ վանքի պարապից դուրս դէմ ու դէմը դտնուում է ջրաղացը մի քարով, ուր ամեն պարագայք կան և մի փոքրիկ հնչեն ծախսով հարկաւոր է նորոգել, որ գործածուի եթէ նորոգելու կամք ունեցող մէկը լինի։

Սորա և վանքի համար գործածելու ջուրը գալիս է մերձակայ քարաժայռ լեռների տակից։ Վանքից մի քանի հարիւր քայլ հեռի ջրի ուղղութեամբ գընալիս երևում է մի փոս ծակ, որով մի մարդ հազիւ կարող է վայր իջնել։

Այս ծակ տեղը ճանապարհ է ջրի, վրան ծածկուած։

Սրանով մօտ 60 քայլ գնալուց յետ ճանապարհը կորուում է, միայն տեսնում ենք ապառաժ քարե-

րից ջուրը հոսում է, այստեղ կայ մի խաչաքար փոքրիկ, և ջերմեռանդների վառած մոմերի կտորտանքներ, այդ տեղ փող էլ են թողել:

Պատմում են, որ այս տեղ ուխտի են գալիս երկու միմեանց անծանօթ անձնաւորութիւններ, մոմ վառում, համբուրում միմեանց քոյր ու եղբայր են դառնում այդպիսով, այս ծածկուած տեղից դարձեալ մի առանձին գաղտնի ճանապարհաւ ջուր է գնում ուղղակի վանքի մէջ, բայց այս ճանապարհը այժմ խափանուած է. այժմ այդ ջուրը ամբողջովին գալիս թափուում է չքանող ջրաղացն և այդ տեղից վանքի առաջ գտնուած մեծ աւազանը հաւաքուում, որ 60 քայլ երկայնութիւն և մի մարդաչափ խորութիւն ունի. որպէս զի վանքի առաջը գրտնուած ծառատեսանը և հողերը ջրէ, — բայց ջրող չկայ և շատ ծառեր փչացել են և փչանալու վրայ են, ուստի և կտրատուում են շատերը, վառելու համար:

Վանքի հարաւային կողմում գտնուած պարապի կողմին առանձին շինութիւններ էլ կան. մի փոքրիկ հրապարակաւ, շուրջը սենեակներ թվով 30 ի չափ: Սոցա և վանքի մէջ տեղը մութը և գաղտնի ճանապարհներով բաժանմունքներ կան, որ վրատանդի ժամանակ իրեղէններ պահելու սենեակներ և նկուղներ են: Այստեղ են հացատունը, խոհանոցը, միաբանաց սեղանատունը, ամբարը, մառանը և այլն:

Արդէն շինութիւնից երևում է և պատմութիւնից էլ յայտնի, որ մեծ միաբանութիւն ունեցել է սոյն վանքը:

Այս կհատատատէ աւելի, մեր տեսած մի ձեռագիր յայտնաւորքն, որ Նախիջևանում Նիքոլա Մատնուչարեան անուն երիտասարդի մօտ է գտնուում, և որ գրել են տեղւոյս միաբաններն, որոց անուններն էլ մի առ մի նրա յիշատակարանում գրած են:

Նախավկայ վանքը ունի բաւականաչափ եկամուտ, որ գոյանում է 60 խալուարի հողերից Աստապատ գիւղում; Տարաշամբ գիւղից՝ որ վանքի կալուածն

է, տարին երկու անգամ ուխտի օրերից երբ հոծ բազմութիւն ուխտաւորների հաւաքուում է, Ռուսաստանի զանազան քաղաքներից և Պարսկաստանից, Աստուածածնայ և խաչի տօներին։

Այդ օրերը կարգապահութիւն պահելու համար գալիս է խանը իւր ձիաւորներով. ժողովրդոց անկարգութիւն մը չպատահելու համար։

Վաղ ունեցել է վանքը կենդանիներ, բայց վանահայրներն իրենց օգտին ծառայեցրել են, ծախել վերջացրել են, փափագելի է տեսնել գոնէ այսպիսի վանքերի վրայ, որ լոկ խօսքով շէն է համարվում, վանքի վրայ հոգ ու խնամք տանելու ցանկութիւն ունեցող և պարտաւորութիւնը ճանաչող վանահայրներ, որպէս զի քանդուածի վրայ խնամք տանեն, պայծառութեանը աշխատին, ժողովրդոց ջերմեռանդութիւնը չթուլացնեն, ապա թէ ոչ եկեղեցին քայքայվում է, այսպիսի մի գեղեցիկ շինութեան տանիքի սալաքարերը քանդուել թափուել են—ինչպէս նկարից կերևի—հասկանալի է, որ անձրևի ջուրը ծծելով տանիքը փուլ է գալու և դատուի ի շարս աւերակաց։

Վանքիս ճիշտ հաստատութեան թուականը թէև չենք կարող իմանալ արձանագրութիւն մը չկրելու պատճառաւ՝ բայց յայտնի է պատմութիւնից, և Աշոտ թագաւորի պարգեւագրին նայելով՝ Թադէոս և Բարդուղիմէոս Առաքելոց կառուցածն է, և որովհետև դարձեալ նոյն պարգեւագրի մէջ յիշուում է, որ ունեցել է թէմ և վիճակ մեծն Ներսէսի ժամանակ հաստատուած, նոյնը Աշոտ թագաւորը հաստատում է ասելով թէ, «որ և սահմանեալ էր ի նախնեաց մերոց և ի ս. հայրապետացն մերոց տեառն Ներսիսէ Թոռին՝ մերոյ Ս. լուսաւորչին, նախ և առաջին հոյակապ և հռչակաւոր մայրաքաղաքն Նախիջևան, Կոկ, Խոյ, Ղարադարան, Մարանդ, և այլն» քաղաքները կրկին հաստատում է իրը կալուած և սեփհականութիւն Նախավկայ վանքին։

Վերջերը նորոգութիւններ ունեցել է, այս հաս-

տատում է և վերոյիշեալ մեր տեսած յայսմաւուրը, որոյ ընդարձակ յիշատակարանից մի կտոր այս տեղ աւելորդ չի լինիլ օրինակելու։

Ահա նոյն յիշատակարանից մի կտոր տեղեկութիւն։

«. . . Շնորհօք սուրբ հոգոյն սկիզբն եղև ողորմութեամբն և յաջողութեամբ Սուրբ Աստուածածնիս, որ կոչի յայսմաւուր, ձեռամբ Ստեփաննոսի սարկաւագի Ջուղայեցւոյ, ի թագաւորութեան յերկրին պարսից շահ սուլթան Հիւսէինին, ի հայրապետութեան հայոց տեառն Նահապետի, որ էր յերկրէն յունաց և ի տեղապահութեան Նախջևանայ Մուրթազաղուլի խանին որ և ի սոյն ամի առաքեցաւ ի շահ սուլթան Հիւսէինէն դեսպան յերկիրն յունաց առ սուլթանն տաճկաց և ի յառաջնորդութեան վանքիս Նախավկային, Յակոբ վարդապետ Շամբեցւոյ և ի թուականութեանս հայոց հազար երրորդի հարիւր երրորդի յիսներրորդի և չորրորդի։

«Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՇամբեցի հոգի ընկալ Յոհան և Պետրոս վարդապետքն, որք ձեռն արկին նորոգման զխախտեալ և զքայքայեալ եկեղեցի սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, զոր բազում ջանիւք և աշխատութեամբ նորոգեցին յոլով ծախիւք առաւել պայծառ քան զառաջինն, բայց չև ևս էր կատարումն գործոյն, եհաս վախճանն Պետրոս վարդապետին զոր փոխեցաւ առ տէր, և զկնի Ա. ամսոյ Յոհան վարդապետն ևս փոխեցաւ առ տէր, և մնաց եկեղեցին անկատար, և Յակոբ վարդապետ, որ յաջորդեաց զկնի նոցա յամենայն սուրբ Նախավկային *) միաբանութեամբ հանդերձ ժրաջան և աշխատաւոր եղբարց ամենեցուն նորոգեալ ի կատարումն հասոյց բազում երանգօք, բայց ի ներքոյ բազում պարտուց կան, զոր տէր Աստուած հասանէ ի թիկունս նոցա և ազատեսցէ ասա և ի հանդերձելումն նոցա և այլն . . .

— յայսմաւուրը զրողների անունները յիշելից յետոյ նաև յիշում է տեղւոյն միաբանաց անունները այս պէս —.

«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զամենեսեան միաբան սուրբ ուխտի, զՅակոբ վարդապետ որ էր առաջնորդ Ս. Նախավկայի վանից, Յովհաննէս վ. Մաղաքիայ վ. Դալուստ վ. Փիլիպպոս վ. Շմաւոն վ. սոքա եպիսկոպոս գոլով են և այլ միաբան Պօղոս վ. Գրիգոր վ. Մարտիրոս վ. Ստեփաննոսն, տէր Գրիգորն, տէր Կիրակոսն, տէր Դաւիթն, տէր Մարգարէն, տէր Սանվելն, տէր Մարտիրոսն, տէր Ստեփաննոսն, տէր Խաչատուրն, տէր Յովհաննէսն. սարկաւագունք Ստեփաննոսն գծող սուրբ տառիս. Ղուկասն և Յովհաննէսն. են և այլ բազում աստիճանաւորք, եկեղեցականք և մահտեսիք զոր տէր յիշէ զանունս նոցա և այլն և այլն . . . »

---

*) Տես նաև Առաքել պատ. գլ. ԻԶ. երես 267. նոյնը յիշատակում է։



ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

ՕՐԻՆԱԿԵԼԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Նախավկայից կրկին նոյն ճանապարհով յետ կդառնանք. որովհետև Հին Ջուղա գնալու համար ամենալաւ ճանապարհը համարուում է այս Տարաշամը գիւղի վատ ճանապարհը, և մի և նոյն ճևով անցնում ենք Արաքսը ինչպէս Նախավկայ գնալու ժամանակ:

Գետի եզերքով մի բարակ նեղ ուղի տանում է մեզ Հին փլատակների մէջ, որ Հին Ջուղան է, և սա տեղաւորուած է Երասխի ձախ ափում, այստեղ ուղևորի առաջ պատկերանում է մի ընդարձակ հանգստարան բազմաթիւ խաչաքարերով խիտ առ խիտ կանգնեցրած, մօտաւորապէս մի քանի հազարներ, կոտրատուած, ջարդուած, տեղեցը խախտուած ու վայր ընկածներ շատ շատ են, կային զանազան թուականների շինած խաչաքարեր, մաքուր փորագրած, բայց ոչ այնքան նուրբ գործ ինչպիսին էր մեր Ա. գրքում Գ.օշ Մխիթարայ երկու խաչաքարերը:

Խաչաքարերը քանդակուած են կոպիտ կարմիր քարերի վրայ, և մի տեսակն էլ դեղին փափուկ քարերի վրայ. զանազան մեծութեամբ են սոքա, կան $1\frac{1}{2}$ արշնաչափից մինչև $3\frac{1}{2}$ արշնաչափ բարձրութիւն ունեցող խաչաքարեր, մենք նկարեցինք ընտրելով միջից զանազան թուականների պատրաստած գործերից թվով 16 հատ. բաւականանալով միայն մի քանիսը ցոյց տալ վերջի ժամանակի վարպետների գործը Հին ժամանակուայ վարպետների գործի հետ:

Ջուղան ինչպէս յայտնի է Հայկական ՈԾ. թուականին բազմամարդ և փարթամ բնակիչներ է ունեցել, որ յետոյ Ա. Շահապատը գերեվարելով այս տեղի

ժողովրդին, Պարսկաստանի Ասպահան քաղաքի մօտ նոյն ժողովրդի համար նոր քաղաք շինեց, որ այժմս էլ կոչուում է նոր Ջուղայ անունով։ Շահապասի գերագարութիւնը կատարուում է հայկական ՈՒՕՐԹՎԻՆ։

Այժմ հին Ջուղայում ոչ ոք չի բնակուում, սորա բնակիչների փլատակ տուները, քայքայուած ու կործանուած եկեղեցիքը, ապրուստի աղբիւր եղող Ջրաղացները, խանութները և վերջապէս իրենց մեռեալների գերեզմանները ու արձանները մնացած են, գերեզմանաքարերի մէջ երբ որոնէք, կգտնէք նոյն ժամանակուայ Ջուղայի քաղաքապետ խօջա Խաչիկի գերեզմանաքարը, որոյ նկարը № 300։

Ջուղայի դէմ ու դէմը գետի միւս ափում կայ նոյնպէս քայքայուած աւեր շինութիւններ, որոց մին ճանապարհորդների համար իջևան է եղած. իսկ միւսը դարձեալ եկեղեցի։

Այն հանդստարանից կամաւեր քաղաքից ոչ հեռի Ջուղայի գիւղն է, նոյնպէս գետի ափին զետեղուած, գեղեցիկ կանաչազարդ դաշտի վրայ, պտղատու ծառերով և պարտէզներով զարդարուած, Ջուղայից գիւղ մտնելիս աջ կողմի վրայ ուղեւորի աչաց հանդիպում է գետի միջից մի ինքնաբուխ աղբիւր, որ տեղացիք աւանդութեամբ - ԿՈՒՌՈՂԷԷ - են անուանում, սոյն բխած ջուրը տարբեր տաքութեամբ է գետի ջրից, կամ նաղբիւրի ջրից վերցնենք և մէջը ածենք փոքր ինչ - ՔՄՈՆԷ ՍՂ - սառա. դուք կստանաք զելտերեան ջուր, այս տեղ գալիս են նուազ կաթ ունեցող ծծմայրերը, որ ջրիցը խմելով կաթ ունենան։



ԵՐԱՍԽ ԳԵՏԻ ՎՐԱՑԻ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆԸ. 305

Տպագր. Լիտ. Ի. Ալեքսանեանցի ի Թիֆլիս.

ԵՐԱՍԽ ԳԵՏԻ ՎՐԱՅ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՆԱԻՈՎ № 305

Իւղե ծայրին կայ գետի վրայ ձգուած հին ժամանակից մեծ կամուրջ, մօտ ութ հարիւր քայլ երկարութեամբ, բայց այս ևս նոյն Ս. Շահապպասը քանդել է, որ գերեվարած ժողովուրդը նոյն կամուրջով յետ չդառնան, այժմ հիմքերը միայն ցից ցից երևում են գետի միւս ծայրին, գետի մէջ կանգնած, և գետի այս կողմ ցամաքի վրայ էլ չորս սիւները:

Այսպէս կամուրջներ Երասխի վրայ ընդ ամենը հինգ հատ են եղած հին ժամանակները քար ու կիր շինութեամբ, բայց այս օր հաղիւ նոցա նշաններն են երևում:

Սորանից ինն վերատ հեռու դէպ արևելք նոյպէս գետի ափովգնալիս հանդում ենք, Ջուղայի և Պարակատանի հաղորդակցութեան սահմանագլուխը, ուր երկու պետութեանց եղեբքում դէմ առ դէմ, հաստատած են մաքսատուն, հեռագրատուն, փոստ, և կառավարչական տների շինութիւններ:

Գետի վրայի հաղորդակցութիւնը լինում է մի տեսակ նաւով, որ պարոն են անվանում տես № 305 նկարը, մենք զետեղում ենք սոյն նկարը ոչ թէ մի հնութիւն, այլ Երասխի և նորա վրայ հաղորդակցութեան ճանապարհը ցոյց տալու համար:

Երասխ գետը ինչպէս յայտնի է ընդունում է իւր մէջ գետեր և աղբիւրներ և ի վերջոյ միանալով Կուր գետի հետ թափուում է Կասպից ծովը:

ԵՐԵՎԱՆ Ս. ՀԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ № 293

ԼՈՒՍԱՆԿԱՐ ՅՈՒՍԻՖՅԱՆ

ԵՐՆՋԱԿՈՒ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ № 293

Էրնջակայ Ս. Յովհաննու Կարապետի հռչակաւոր վանքը, Ապրակունիս գիւղի դաշտավայրի վրայ, պարապատ հասարակ քարերից և աշտարակներով։

Պարապի մէջ տեղը միջակ մեծութեամբ տաճարն է կառուցած իւր վայելուչ կամուղիկէիւ, տաճարի հարաւային կողմում երկարաձև փոքրիկ մի մատուռ ևս կայ, որոյ վերայ է կառուցած զանգակատունը, մատրան մէջ կարմիր գեղով գրուած մի արձանագրութիւնից հասկացուում է, որ Մոմն Շուրութեցի խօճա Այվազ անուն շինել է իւր յիշատակին սոյն Ս. Ստեփաննոս անուն մատուռը. ահա արձանագրութիւնը։

Ի թուոյ ազին մեր Հայկի
Հազար հարիւր վաթսուն երկքի
Խօճա Այվազն գովելի
Յոյժ բարեպաշտն ցանկալի,
Ցեղեաւ գոլով Շօռօթեցի
Շինեաց տաճարս այս նազելի
Յանուն սրբոյն Ստեփաննոսի
Նախավկային մարտիրոսի
Իւրն յիշատակ է միշտ կենդանի
Որով Քրիստոս պատարագի
Մասն և բաժին իւրն լիցին
Եւ ծնողացն Մկրտչին և Կարապետին
Եւ կողակցին Թառիկին
Եւ քեռցն Աննայուն և Փառակուն
Եւ դստերցն և իւր տան
Արբանեակն է Մարգարիտն
Զոր տէր Աստուածն ամենայնի
Զինքն ի ցաստանց անփորձ պահի
Երկար կենաց այս աշխարհի
Պայծառ փառաց ի յատենի
Աթոռս մեծին Յովհաննէսի
Իւրն օգնական միշտ լինիցի
Թէ առաջնորդ թէ միաբանք
Եմք Այվազէն շնորհակալ։

Ինչպէս յիշեցինք սոյն մատրան վրայ զանգակատունն է կառուցած, արդեամբ Նախիջևանցի Աղաջանի որդի պարոն Աղամալի յիշատակին, ՈՒՇՕԳ. հայկական թուին. սորա արձանագրութիւնը արևմտեան սեան ճակատին գրուած է, զանգակատան մէջ պատարագ մատուցանելու համար նա խորանաձև է, բայց սեղանի վէմ քարը չկայ այժմ։

Ս. Յովհաննու կարապետի տաճարն արևմտեան դրան առաջ ունեցել է մի ժամանակ սիւնազարդ գաւիթ. որոյ վրայ եղած է զանգակատունը, բայց այժմ բոլորը խոնարհուած է, հիմքերն են երևում։

ՀԱՅԿ
9578

Տաճարի հիւսիսային կողմը լուսամուտից վերև, մի թուական կայ համառօտ գրուածքով այսպէս:

« Եսայի վարդապետ շինող թվ. ՌՃԴ. »

Այս այն Մեղրի գիւղացի Եսայի վարդապետն է, զոր առաքել պատմ: գրում է զլ. ԻԱ. երես 267. « Սոյնպէս « և Եսայի վարդապետն՝ որ էր ինքն ի Մեղրի անունեալ գեղջէն, և սա ևս « յաշակերտաց տեառն Մովսէսի կաթուղիկոսին էր, որ ի Փիլիպպոս կաթու- « ղիկոսէ եպիսկոպոս և առաջնորդ կարգեցաւ Ս. Կարապետի վանացն, որ « ի գաւառին Երնջակայ, Եւ սա ևս յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսի սկսաւ « նորոգել զնոյն ինքն Ս. Կարապետի վանքն, զի միանգամայն զամենայն յա- « ռաջագոյն եղեալ շինուածսն քակեալ երարձ ի միջոյ, զեկեղեցին, և զտնե- « րն, և զիցերն, զպարիսպն, ապա շուրջանակի լայն և ընդարձակ զհաստ և « զբարձրագոյն պարիսպ էարկ, և ապա ի մէջն տունք և ապարանք ի բնա- « կութիւն ինքեանց և հիւրոց, Եւ առաւել զեկեղեցին՝ ի տեղի հին եկե- « ղեցւոյն, լայն և ընդարձակ և բարձրաբերձ կամարօք և կաթուղիկէիւ, ի վե- « րայ չորից սեանց կառուցեալ՝ սրբատաշ վիմօք, կատարեալ զամենայն եկե- « ղեցին ի հիմանց մինչև ցծայրս նորին յոլով աշխատութեամբ և բազում « ծախիւք կատարեցան ամենայն շինուածքն, և ի ՌՃՍ. թուին և Հոկտեմ- « բեր ամսոյ ԺԷ. օրհնեցաւ եկեղեցին մեծահանդէս նաւակատեաք ի փա- « ռաց . . . . »

Մի թուական էլ արևմտեան դրան վրայ, դարձեալ բարձրում լուսամուտից վերև գտնուած մի խաչաքարերի տակին:

« Եսայի և Պօղոս վարդապետ շինողք թվ. (Ռ).

Այս էլ դարձեալ նոյն Մոկացի Պօղոս վարդապետն է, զոր ինչպէս գրում է նոյն առաքել պատմ: « զի առաքելաբար շրջեր յամենայն տեղիս — Պօղոս վարդապետն — քա- « ղաղեր զբանն կենաց, կարգեր զքահանայս, շինէր զեկեղեցիս, և հաստա- « տէր զբարի կարգս յեկեղեցիս և ի գիւղս, ժողովէր մանկունսն յուսումն « սրբոց գրոց, և ի տեղիս տեղիս հաստատէր դպրատունս, և յիւրոց աշա- « կերտաց կացուցանէր դպրապետս և այլն . . . . . »

Եկեղեցւոյ երեք բոլորտիքը շինութիւններ են կառուցած, ուխտաւորաց, միաբանաց համար սենեակներ, վանքի հացատունը, խոհանոցը և այլն. շինութիւնք հասարակ քարերից են, և կան երբեմն աղիւսաշէն:

Այդ տեղ կայ գործունեայ երիտասարդ վանահայր Միքայէլ վարդապետ տէր Մինասեան, իւր հետ ունենալով մի ժրաջան օգնական Թադէոս վարդապետ, որոնց գործունէութիւնները թուել այս տեղ աւելորդ է, այս տեղ այցելողը ինքն արդէն ականատես է լինում տեսնելով բաւական նորոգութիւններ, որ արել են, թէ տաճարի վրայ և թէ սենեակների, և որ ամենագլխաւորն է տաճարի մէջ մաքրութիւնն կատարեալ է։

Այս վանքն ևս ունի բաւական եկամուտ, մեծ ուխտագնացութիւն լինում է տարին մի անգամ Վարդավառի տօնին. այս տեղ ի միջի այլոց կայ ամենափրկչի մասունքն, որ միշտ զանազան քաղաքներ և գիւղեր շրջակայում և բաւական արդիւնք է բերում վանքին, ունի վարելահողեր, մի այգի, ջաղաց, մասնաւոր թուով կենդանիք։

Կան այս տեղ մասանց խորանում բաւական թվով ձեռագիր և տպեալ գրքեր եկեղեցական բովանդակութեամբ, որոց մէջ կայ հին՝ գեղեցիկ ձեռագիր աւետարան հայկական ՅԱՅՍ Թվին Ղուկաս սուտ անուն կրօնաւորի ձեռօք գրուած, որ նուիրում է Աբլանի դուստր Մարիամը սոյն վանքին, իւր և իւր ծնողաց յիշատակին։

Սոյն վանքի արևելահիւսիսային կողմումն է Քառանուանեալ թրքաբնակ գիւղը, մի սեպացեալ քարաժայռի ստորոտում, որ թուրքերը նշան-գոպէ կամ ֆուն-գոպէ են ասում։

Այս տեղ կայ Ունիթորների կառուցած մենաստանը, որ ինչպէս յայտնի է պատմութիւնից 14-րդ դարում ապրեցաս Յովհաննէս Գռնեցոյ շնորհին է եղած. սա մի քառանկիւնի երկյարկանի և ապիւսաշէն շինութիւն է մեծ գմբեթով, որ այժմ կործանուած է. ունի արևմտեան կողմից մի մեծ դուռ, որոյ երկու կողքին կամարաձև սիներ են կանգնեցրած։

Սորա միաբանական սենեակներն էլ բոլորը խոնարհուած են այժմ։

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ:

ՕՐԻՆԱԿԵԼԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ունիթորների մենաստանի հիւսիսային կողմից Շուռութ գնալիս, մեր առաջ բացուում են մի քանի կիրճեր Սիւնեաց լեռների ստորոտում, և սոյն կիրճերի մէջ գտնուում է մի բարձր քարաժայռ, որոյ ոչ մի տեղից վերև բարձրանալ անկարելի է. բացի հիւսիսային կողմից:

Այդ կողմով վերև բարձրանալիս կտեսնէք որ պարսպապատել են, հիւսիսային կողմից սկսած մասամբ դէպի արևելակողմի մի մասը, և հարկ էլ չէր մնացեալ կողմերն պարսպել, քանի որ անմատչելի դիրք ունին:

Այս տեղ, ճշմարիտ է՝ երևում են շինութեանց հետքեր, որ տեղացիք աւանդութեամբ անուանում են Սմբատայ բերդ, պարիսպը և միջի շինութիւնները բոլորովին քանդուած են. միայն նշմարելի են հետքերը:

Սոյն ժայռի կամ բերդի հարաւային կողմից՝ իլան դաղեի արևելեան կողմով ճանապարհը տանում է մեզ Շուռութ գիւղը, հին անունն էլ «Շօ-օթ» որ բարձրադիր տեղւոյ վրայ է հաստատուած:

Այս տեղ կան մի քանի մեծ եկեղեցիներ, որոնցից միայն մինը մնացել է հաստատուն Ս. Յակոբ անունով, միւսների միայն հիմքից 1, և տեղ տեղ 2 արշնաչափ բարձրութեամբ պատերն են մնացել, աւերակներից մին, որ մեծ է դիրքովը միւսներից, և ոչ էլ հեռի Ս. Յակոբայ եկեղեցուց, ունի կողքին մի աղբիւր, որ այժմ ցամաքած է և սորա աւազանի վերև մի քարի վրայ հետևեալ արձանագրութիւնը կայ:

«Թուականիս ՌՃԺԴ. մենք Փշրկանց խոջա Սահակս և Զաքարէս որ ենք
«եղբարք հարազատ բերաք աղբիւրս ի գիւղս որ կոչի Շօռօթ մեր և ծնո-
«ղացն մերոց մահտեսի Աբգարին և Նապլու խանին. և կողակցուն մերոց
«Մարեմանցն և մեր որդւոցն Թումասին ի ժամանակս Հայրապետութեան

. տեառն Յակոբայ և Թագաւորութեան պարսից փոքր շահապասին. Յիշեցէք
. և Աստուած ողորմի ասացէք ամեն։ — սորա վրայ երկու տող
էլ պարսկերէն տառերով է գրուած։

Այդ փոքր Շահապասի և Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսի ժամանակուայ շինութիւն է Ս. Յակոբայ վանքն էլ, որ այժմ գիւղացւոց աղօթատեղին է, արբասաշ քարերից կազմուած և հաստատուն շինութեամբ։

Արևմտեան դրան վրայ իւր սիւնապարդ գաւթով զանգակատունն է եղած, այժմ միայն սիւներն են մնում կանգուն, բոլորովին խոնարհուած են զանգակատունն և գաւիթը։

Եկեղեցին և լայնանիստ է և բարձր, 8 առանձնակի քարեայ քառանկիւնի սիւների վրայ հաստատած։

Ունի աւագ սեղանի կողքերին փոքրիկ սեղաններ և երկու աւանդատուն, աւանդատանց միջից ճանապարհներ ունի, որ տանում են նոցա վրայ կանգնած սենեակները։

Երկու խորաններ ևս ունի միջին դասում։

Աւագ սեղանի բարձր կամարը ճեղքուած է։

Ունի երեք դռներ հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերում։

Եկեղեցւոյ բակում կառուցել են ուսումնարանի համար երկու սենեակներից բաղկացած շինութիւն, բայց գիւղացիք աղքատ լինելով չեն կարողացել այնքան տարի է ուսումնարանը բաց անել։

Դաւ գիւղիս արևելահարաւային կողմ մի վերատ հեռու աղիւսաշէն մի խարխուլ եկեղեցի էլ կայ, այսպէս մի քանի եկեղեցիք ունեցող գիւղ յայտնի է, որ ի հնումն բազմամարդ է, եղել բայց այժմ ինչպէս երևում է հազիւ 60տուն աղքատ բնակիչներ ունի, թէ հայ և թէ թուրք։

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱՋԵԱՆՑ: ✻ ՕՐԻՆԱԿԵԼԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

ուռուքիից Պիատ և սորա շրջակա-
ներում կան շատ գիւղորայք, ո-
րոնց մեծ մասի բնակիչք այժմ
թուրքեր են, և կան սոյն գիւղերի
մէջ հայոց հին եկեղեցիներ և վան-
քեր, ոմանք խորտակուած, և ո-
մանք աւերակ դարձած, և կան ոմանք բոլորովին խո-
նարհուած ու հողի հետ հաւասարուած:

Մեծ մասամբ սոցա շինութիւնը օրօրոցաձև է, ինչպէս են Մբսրվան գիւղինն, որ Պիատից դէպի հիւ-սիս ձորի մէջ է գտնուում յանուն Ս. Գրիգոր լու-սաւորչի:

Ուանդուքեամբ տեղացի բնակիչք պատմում են, որ սա Մեսրոբ թարգմանչի կառուցած վանքն է և սորա մասին այսմաւուրի մէջ յիշատակում է այսպէս.

«Զի ոմն կամեր տանել զսուրբ մարմին Նորա ի գաւառն Տարօնոյ, ուր ծնեալն
«էր և սնեալ ի բնիկ գեղջն իւր Հացիկ։ Եւ այլ ոմն ի նախակերտեալն իւր վանս՝
«ի գաւառն Գողթան, որ գեռ ևս Աստրէվանս կոչի տեղին այն, այսինքն Մեսրոպ վանք և այլն.» որ ի հարկէ լեզուի աղաւաղանօք գտեալ է Մբսրվան:

Սա մի հասարակ քարերից կազմուած օրօրոցաձև մի շինութիւն է, առանց կամարների, նման Պիատու եկեղեցւոյ, նեղքին կողմը փառաւոր, լայնանիստ, բարձր ու հոյակապ, չորս առանձնակի քառանկիւնի սիւների վրայ է կառուցած:

Կան նաև Տէվու և Շուլի գիւղերում, որ բոլորովին աւերակ են:

Նաւուղի գիւղում կայ գիւղային փոքրիկ մի եկեղեցի հասարակ շինուածով:

Ալայի գիւղում՝ խախտուած է եկեղեցին. այս տեղ մի վանք էլ կայ և ուխտատեղի է Ս. խաչ անունով, որ գիւղացւոց եկեղեցին է:

Ասում են, որ այս տեղ գտնուում է կենաց փայտի մասունքից:

Պիատ գիւղը — հին անունը Փ...ոպ — գտնուում է, Շուռուքից դէպի հարաւ 9—10 վերստ հեռու մի

Այս եկեղեցին, որ յանուն Ս. Սա՛փաննոսի է. գաւիթը խնարհուած է բոլորովին, արևմտեան միակ դրան երկու կողքերին սև գեղով գրուած արձանագրութիւն ունի անթուական և համարեա ոչ ինչ չի հասկացու

զերի ամբողջ հողերը, ինչպէս նոյն տեղերի արձանագրութիւններից երևում են՝ պատկանում են եղել նոյն գիւղի եկեղեցեաց և վանքերին, որ այժմ ինչպէս տեսնում ենք անտէրութիւնից թուրք խաներն իրենց են սեպհականացրել, սակայն այս անգամ երբ հողաչափները եկած էին նոյն գիւղի հողերը չափելու և սահմանները որոշելու, հոգ. իշխանութեան կողմից էլ եկած էր Ադուլիսի գործակալ տէր Խաչատուր Յովհաննէսեանն. յոյս էր տածում, որ ժողովրդի վկայութեամբ և արձանագրութեանց ուժով կրկին վերահաստատուին այն հողերը վերոյիշեալ գիւղերի վանքերի վրայ իբր սեպհականութիւն:

Այդ արձանագրութիւններից մինը նոյնութեամբ կընդօրինակենք այստեղ, որ գտնուում էր Փառակու Ս. Հաւսն վանքի մէջ մի մարմարեայ քարի վրայ այս օրինակ:

« Թուին 1155 ՌՃԾԵ. մենք Փառակու իշխանքս քահանայքս տէր Գրիգոր,
« տէր Ստեփան, տէր Պետրոս, մահտեսի Փիլիպպոս որդի Ծատուրի, Մանուկի
« որդի մահտեսի Աւետիք, մահտեսի Մուրատ, Բենեսթ մահտեսի Մինա-
« սի որդի Պալեղ, Արամի որդի Մուրատ, տէր Դանիէլի որդի Թադէոս, Կա-
« բապետի որդի Պօղոս, Յովհաննէսի որդի Յարութիւն, ԺԲ. անձինքս հաստա-
« բակութեան խնդրանօք մեր սեպհական հողերին տասանորդն վախուսկ-
« ցինք սուրբ եկեղեցեաց կառավարութեան լոյսոյ, սուրբ Հմաւսն եկեղե-
« ցոյն, Յակոբ Հայրապետին, սուրբ Ստեփաննոսին, Եղիա մարգարէին, սուրբ
« Նշանին, Հուռումնիմայ խաչին, հողն է ճանապարհի տակն Պարուճի-
« ղեցն մինչի քարկապն սուրբ Նշանին է, Հիրիշտանի ձորէցն և մինչի Թա-
« փու ձոր գետի էս կողմն էն կողմն սուրբ Հմաւսն եկեղեցւոյն է, Թա-
« փուղանի ձորիցն մինչի Աշղպաղից սուրբ Յակոբ Հայրապետին, Ուլու-սու
« ճուրն աջի կողմի հողն Պատար-պաղիցն մինչի Պոյատ ու սարն հանդի
« ծորի շուանն է, Եղիա մարգարէին վախուսն է իր չորս կողմն է, սրրոց
« պայծառութիւն »:

Այն վերոյիշեալ տեղերը իբր սահմաններ տեղացիք մի առմի ցոյց են տալիս, և այժմ էլ նոյն անուններով յիշում են սուրբ տեղեաց անունները, որք նշանակուած են, նոյնպէս կան այժմ էլ, Ս. Հաւսնն, որ գիւղ եկեղեցին է, — Պիստու հար և նմանը, որ և սորա մէջն է գտնուում նոյն արձանագրութեան քարն:

Ներկա մարդարէ տաճարը՝ գիւղի կողքին մի լարձրը սարի գլխին մի մատուռ է հասարակ քարերից շինուած, որ մինչև անգամ Պիտա գիւղից երևում է, Հռէփսիմէ խաչը, գիւղի ծայրին ճանապարհի վրայ նոյնպէս փոքրիկ մի մատուռ է:

Ս. Ստեփաննոսն էլ առաջ վանք է եղել յետոյ քայքայուել է, և այժմ դորա տեղ փայտաձաձկ փոքրիկ մի ուխտատեղի են շինած, որ գտնուում է գիւղի վերջի ծայրին ձորի մէջն, իսկ Ս. Յակոբ Հայրապետն գիւղի հիւսիս արևմտեան կողմը երկու վերստ ճանապարհաւ մի ձորամիջին է գտնուում, ապիտակ և գեղին քարերով շինած, փոքրիկ կաթուղիկէիւ, շուրջբոլորտիքը վանքիս, սենեակների փլատակներ են:

Վանքիս արևմտեան կողմը ունեցել է անսիւն գաւիթ միայն կամարակապ, որ այժմ բոլորովին խոնարհուած է, սոյն գաւթի մէջ կան երեք մարմարեայ տապանաքարեր, քարերը բոլորովին ջարդուած են, որոց մէջ տեղը գտնուածի վրայ գրուած է, «ԴԱԽԻՒՔ ԱՐԱՏԵՑՈՅՑ ԱՍՏՈՒԱԾՈՎ ԹՎ. ՌՃԸ.»:

Կողքի քարի վրայ փորագրուած է մի մորուքաւոր մարդու պատկեր, ձեռին մի գիրք, կուրծքից մինչև ոտների վերև մի տախտակ, որի վրայ միայն «ՏԷՐ ՊԵՏՐՈՍ» անունը կարդացուում է, միւս տեղերը բոլորովին ջարդուած լինելուն պատճառաւ:

Միւս ծայրի քարի վրայ «ԹՎ. ՌՃԿ. ՅՈՒՆՎԱՐԻ Ա.» մի գաւազան նկարուած և գրած է «ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱՂԱՐ «ՎԱՐԴԱՊԵՏԻՆ. ՍԱ ԾԱՌԱՅԵՐ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻՍ, ՂՀԱՆԴԻՊՈՂ. . ԶՄԻԱԲԵՐԱՆ» այս էլ կոտրուած լինելուն այսքանը միայն կարդացուում է:

Փառակու գիւղի ժողովուրդը ոչ ինչ պարապմունք չունի, և համարեա տղամարդիկ էլ չկան, եղածները ծերունիներն են, երիտասարդները ծառայում են Երևան, Թիֆլիս և այլ տեղեր խոհարարութեամբ և սպասաւորութեամբ, իսկ կնանիքը գործում են խալիչա և կարպետներ:

จุฬาลงกรณ์มหาวิทยาลัย

ԵՐԵՎԱՆԿԱՐ ՄՕՎՍԷՍԱՆՑ:

ՕՐԻՆԱԿԵԼԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Փառակա գիւղից Յղնայ գնալիս իջնում ենք և գնում մի ձորամիջով ընթացող գետի հոսանքի ուղղութեամբ, այս գետը Արարվան, Պիսատու և Փառակայու ջրերը միմեանց խառնուելից կազմուելով անցնում է Յղնայի միջով ու գնում թափուում է Երասխի մէջ։

Գետի եզերքը անթիւ թթենու ծառեր տնկած են, որոնց պտուղից օգի են քաշում, նոյնպէս և չորացնում են, Փառակայից մինչև Յղնայ 12 վերստ ճանապարհ է, գիւղը գտնուած է ձորամիջում գետի երկու եզերքի վրայ, պարտէզներով զարդարած. բնակիչները բոլորը հայ են։

Ունի մի եկեղեցի Ս. Աստուածածնայ անունով, փառաւոր և հաստատուն շինութեամբ. մի և նոյն ձևի, ինչպէս էր անցկացած գիւղորայքում գտնուած վանքերինը։

Երևում է, որ առ հասարակ Գողթան գաւառի այս մասում գտնուած վանքերի շինութիւնը մի ճարտարապետի գործ է և կամ միմեանցից օրինակուելով մի և նոյն ձևի են կառուցուած. միայն այն զանազանութեամբ, որ ոմանք առանց կամարուղեկի են. Յղնայի եկեղեցին ունի կամարուղեկ և հարաւային կողմում կանգնեցրած զանգակատուն, որոյ հարաւային ճակատի սիներին մինչև վերև քանդակուած կայ Աբրահամի խաչելութիւնը, միւս սեան վերևն էլ թագը գլխին մի թագուհու արձան է փորագրած, որոյ գլխի վրայ թեւատարած մի ադաւնու նկար է քանդակուած։

Այդ զանգակատան արևմտեան երկու սիների միոյն վրայ նոյնպէս քանդակուած են Ադամ և Եւայի

մերկ և փոքրագիր պատկերները. միւս սեան վրայ մի հրեշտակ ձեռին կշիռ բռնած:

Զանգակատունը եռայարկ է, ներքին յարկը չորս քառանկիւնի սիւներով, երկրորդ և երրորդ յարկերը ութեան կամարակապ կլոր սիւներով վերջանում է կամուղեկէիւ:

Թէ զանգակատան և թէ եկեղեցւոյ ամբողջ շինութիւնը կազմուած է կարմիր սրբատաշ քարերից:

Եկեղեցւոյ երկարութիւնը և լայնքը 45 քայլաչափ է:

Ունի երկու դռներ մինը արևմտեան իսկ միւսը հարաւային կողմից, որ զանգակատան ներքևն է ընկնում:

Այն վերջի դրան վերևը քանդակուած են առաքելոցն Պետրոսի և Պօղոսի արձանները:

Զանգակատան ներքևի յարկի վրա կան հին գեղեցիկ մանաքարեր, որոնց միայն մի քանիսի արձանագրութիւնն դժուարաւ կարդացուում են. մինը, «այս «է խօջա Սիմոնի կողակից Անթառամին ՌՃԾԴ «:

Մի ուրիշ մաշուած քարի վրայ, «այս է տապան տէր «Սարգիսի որդի տէր Սարգիսին թվ. ՌՃԿԹ: «Արևմտեան դրան ճակատին կայ անթուական մի արձանագրութիւն այս օրինակ:

«Մենք Ցղնու եղեալ իշխանքս շինեցինք տունս Աստուծոյ Ս. Աստուածա-
«ծին տվինք ԺԲ վեդր ոսկի էլ մեր մէջն վախուպեցինք տասնին մէկն որ
«պայծառութիւն որ է մէկ հատն արևելեան կողմը կետն, յարևմտեան
«կողմն սարն հարաւային կողմն հարման:

Եկեղեցւոյ գմբեթի շուրջը ութ բարձր լուսամուտներ կան. իսկ եկեղեցին 12 լուսամուտներով լուսաւորուում է:

Չորս առանձնակի կամարակապ բոլորաձև սիւներ ունի, որոնք պահում են լայնանիստ մեծ գմբեթը:

Եկեղեցւոյ բակում հարաւային կողմի վրայ երկյարկանի ուսումնարանն է կառուցած, որ անցուկ կերպով կառավարւում է 1100 բուբլի եկամուտ ունենալով, որը գոյանում է 600 բուբլու չափ թոշակներից, 200 բուբլու չափ այլ և այլ արդիւնքներից, ինչպիսի են գիւղի կշեռքից և դատարանի տան վարձից 200 բուբլի եկեղեցուց· 60 բուբլի հասարակութեան կողմից յատկացրած հողային տուրքերից և այլն:

Որովհետև գիւղի հողը ամբողջ պատկանում է վանքին, ուստի և ժողովուրդը իբր հողային տուրք վճարում է տարեկան 100 բուբլի, 60 ը ուսումնարանին և 40 ը Էջմիածնայ վանքին տալով:

Այս գիւղը 82 տուն ժողովուրդ ունի, որոյ համար սոյն մի եկեղեցին թէ և իրեն բաւական է, բայց ինչպէս հաստատ հաւատացնում են, որ եկեղեցին մօտ 7—8000 փող ունենալով, երեցփոխը և մի քանի անձինք կամենում են և ձեռնարկել են մի այլ եկեղեցւոյ շինութեան էլ· յայտարարելով հոգ· իշխանութեան, որ իբր թէ մի ուխտատեղի է եղած և ուզում են նորոգել, այն ինչ մի ուխտատեղի այդ գիւղում և մանաւանդ այդ տեղ չէ երևում:

Արդէն շինութեան ձեռնարկել են ու առանց օծման հիմքը դրել և երկու արշնաչափից աւել պատերն բարձրացրել, սա գանուում է գիւղի հարաւային կողմը եղած եկեղեցւոյ համարեա մօտը:

Այժմ գնանք Գոդթան գաւառի գլխաւոր աւանը—Աղուլիս, որ ունենք հայոց պարծանք առաջին լուսաւորչի օրով հաստատուած հռչակաւոր մի մենաստան, այն է Ս· Թովմայի առաքելոյ վանքը:

ԼՈՒՍԱՆԿԱՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆՑ։ ✻ ՕՐԻՆԱԿԵԼԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է։

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Ղնայից մօտ 13 վերստ հեռու դէպի արևելք, տակաւ առ տակաւ ճանապարհը բարձրանում է մի սարի կատարը, որտեղից տեսանելի է լինում Ագուլիսը քարաժայռ լեռների մէջ մի ցածր ձորի երկարութեամբ զետեղուած, պարտէզներով, անթիւ և անհամար թթենու և պտղատու ծառերով զարդարուած, այգիներով, հոյակապ և լայնանիստ եկեղեցիներով, հռչակաւոր Թովմայ առաքելոյ վանքովը։

Եկեղեցեաց շատութիւնը վկայում և հաստատում է այն խօսքը թէ «Ագուլիս է աւան ինչ մեծ ի Վասպուրական» «աշխարհի մեծին Հայոց ի Գողթան գաւառի»։

Դայելով Ագուլիսի այս բազմաշատ եկեղեցիներին ու ուխտատեղիներին, ճշմարիտ է, որ մի ժամանակ Ագուլիսն բազմամարդ է եղել, մօտ 10—12 հազար բնակիչներով։

Բայց այժմ հայ և թուրք բնակիչների թիւը կազմում է ընդամենը մի քանի հարիւր տներ, որոնց մեծ մասը հայերն են։

Ագուլիսում ձորի բարձրից սկսած եկեղեցիները երևում են միակարգ, բոլորը սպիտակ գմբեթներով։

Համարեա բոլորի շինութիւնները միմեանցից 20—30 տարուով աւելի կամ պակաս թուական են կրում, բացի Թովմայ առաքելոյ վանքի կառուցումը, որ Փրկչի 325 թուին է պատկանում։

Դէպ ձորի վերին ծայրում գտնուում է Ս. Ստեփաննոս անունով ծխական եկեղեցին։

Յետոյ եկրորդը, Թովմայ առաքելոյ վանքն է, որ արևելահարաւ կողմը բարձրում առանց կաթողիկէի Ս. Մինաս եկեղեցին է, որ առաջ մի փոքրիկ ուխտատեղի է եղած և նորոգուելով այժմ պայծառ եկեղեցի է դարձած։

Յետոյ Ս. Բրիատափորի եկեղեցին, որ Ագուլեաց կեդրոնում լինելով, մայր եկեղեցին է համարուում, այս տեղ բակում գանգակատան առաջ ամփոփեալ

կայ Ագուլեցի բարեբաշտ և բարեգործ աղա Աւետիս տէր Մկրտչեանի գերեզմանաարձանը, վրան գրուած այսպէս:

« Ամիսոփի ընդ արձանաւս մարմին աղնուատոհմ Աւետիսի Գալստեան տէր Մ՝ Յրտչեանց ծնելոյ ի 24 Մայիսի 1821 թվ. և վախճանեալ ի 5 Յունիսի 1863 թուականի » ։

Սորանից ցածը Ս· Հմաւօնն է:

Յետոյ մի հին եկեղեցւոյ տեղ կայ, որ այժմ եղբարը տէր Միքայէլեանցի ծախիւք փառաւոր եկեղեցի է կառուցուում, և կարելի է ասել, որ սա բոլորովին նոր ճաշակով, նոր ճարտարապետական ձևով է շինուում, դեռ ևս կիսատ է, մինչև կամարները բարձրացած և շուտով ծածկելու են տանիքը:

Սոցանից ներքև ձորի ծայրին գտնուում է Ս· Յովհաննէս եկեղեցին:

Սրբա բոլորը մաքուր սրբատաշ կարմիր քարերից են շինուած· բացի Ս· Մինասից:

Ագուլիսն ունի նաև ուխտատեղիներ, որոց մէջ անուան ոօնեերին պատարագ է մատուցուում ու շատ ուխտաւորներ են գալիս:

Ինչպէս է Ս· Փրկչի եկեղեցին, որ փոքրիկ հասարակ շինութեամբ մի մատուռ է, ուր Բարդուղիմէոս առաքելոյ աշակերտ Կոմսիի գերեզմանն կայ:

Ս· Աստուածածինը, որ Ս· Քրիստափոր եկեղեցւոյ կից է:

Յակոբ Հայրապետինը· սա Ս· Յովհաննէս եկեղեցւոյ արևմտեան կողմում այգիների մէջ է, սորա համար մտադրութիւն կայ, որ տեղը նոր եկեղեցի կանգնեցնեն:

Ս· Աստուածածին, որը գտնուում է վերին անապատ—Ագուլիսի արևելեան կողմը, սա ունի իւր համար առանձին սեպհական վարելահողեր ու պարտէզ և ընդ հակողութեամբ Թովմայ առաքելոյ վանքի վանահօր առանձին տեսչութիւն ունի, այժմ, տեսուչն է Պ· Մինաս Աբրահամեանցը:



Հայոց Ամենափրկիչ Ս. Խաչ վանքը Սեբաստիայի գաւառում։

Թովմայ առաքելոյ վանքը պարտէզների և ծառաստանների մէջ տեղում զետեղուած է պարապապատ, պարիսպն է քառակուսի, որոյ մէջ տեղն է տաճարը, ներքուստ չորս բոլորտիքը շինութիւններ է կառուցած, որոնք մասամբ քարաշէն և մասամբ աղիւսաշէն են:

Երեք դռներ ունի պարիսպը, մինը արևմտեան մեծ դարպասի դուռը, որ ուղղակի դէմ ու դէմ է տաճարի արևմտեան դրան, միւս երկուսը հարաւային և հիւսիսային կողմերում փոքրիկ, որ տանում են վանքի պարտէզը և ծառաստանը:

Պարսպի հիւսիս-արևմտեան անկիւնում վանահօր կացարանն է, սորա կողքից սկսած հիւսիսային շարքը վերին և ներքին սենեակները ուխտաւորների համար են, արևելեան շարքը նոյնպէս սենեակներ են, հարաւային և արևմտեան կողմի շինութիւնները յատկացրած են ուսումնարանի և սորա գրադարանի համար:

Ընայելով, որ վանքը բաւականին հին ժամանակուայ շինուածք է, բայց և այնպէս իւրաքանչիւր այցելուի առաջ հանդիսանում է թէ դրսի և թէ մանաւանդ ներսի կողմից իբրև մի նոր գրեթէ բոլորովին նոր ժամանակիս ճաշակով կառուցած շէնք:

Պարսպից ներս մտնում էք թէ չէ, աչքի է ընկնում հոյակապ տաճարն, որ ամբողջապէս կարմիր սրբատաշ մաքուր քարերով է շինած, շուրջն ինչպէս վերև յիշեցինք վայելուչ սենեակներ, հանդերձ իրենց տակի խուցերովն ու ներքնատներով. թթենոյ ահագին ծառերն և չինարիներն մասամբ հովանաւորում են բակի չորս կողմը. ունի սեպհական աղբիւր բակի արևելեան կողմում՝ պարսպի ներսում:

Տաճարն ունի երեք դռներ, հարաւային, արևմտեան և հիւսիսային կողմերից, որոնց երեքի առաջն էլ մի մի զանգակատուն է կանգնեցրած:

Արևմտեան դրան վրայի զանգակատունը, որ վերջի ժամանակներս է շինուել 1831 թուին հախումեանների ծախիւք. գմբեթի շուրջը ներքին կողմից սև գեղով գրած ունի հետևեալ արձանագրութիւնը:

«Յիշեցէք այսինքն Ագուլեցի ի Շուշի բնակեալ Հախումեանց Սահակի
«որդիքն աղա Մնացական, մահտեսի Աղաբաբան և աղա Մատթէոս նա և
«Մարտիրոսի որդի աղա Թոմաս և որդիքն սոցին Սահակին, Մնդրէասին,
«Մարտիրոսին, Յարութիւնին և Առաքելին, և դուք յիշողք յիշեալի-
«ցիք առաջի Աստուծոյ մերոյ ✠. 1831 թուին շինեցաւ զանգակատունս:

Այն զանգակատան ներքև, որ տաճարի արևմտեան աւագ դուռն է, դրան վրայ քանդակուած է

և ներկուած Դրիսատոսի պատկերը, ուր Թովմայ առաքեալը ծնկաչոք շոշափում է Դրիսատոսի կողը։

Սոյն քանդակի ներքև գտնուում է վանքիս հաստատութեան բուն թուականը կրող մի արձանագրութիւն, որ աւելորդ չլինել այս տեղ օրինակելու։

«Բարդուղիմէոս ի Հայս եկեալ. զտուն տեառն նախ ասա հիմնարկեալ.
«սուրբ Թովմայի առաքելոյն անուն կոչեալ գահ հաստատեալ. Կոմսի ա-
«նուն զիւր աշակերտն տեսուչ տեղւոյս զնա եդեալ. որ և զտուն Գողթ
«գաւառիս ի նա յանձնեալ. զՀօտն ընտրեալ. մերձ Ագուլիս և Դաշտ գո-
«վեալ. Ցղնա, Ռամիս, սմա յանձնեալ, Փուտա, Փառակա, Լս տուեալ,
«Բուհրուտ, Տեի, Անքակ եդեալ. և Շրջու ընդ Մըսրման և Աղահի ցիւր
«ցանկ հաստատեալ. Տաստակ, Վանանդ, կցորդ եդեալ Տրունիս, Տնակերտ
«միաբանեալ. Օրովանիս և Քաղաքիկ և Անապատն յանդամիջոց. Վերունգետ-
«ցիգ և Կեղերցիկ, Նունիս, Ցորդուատ բաժին կարգեաց. Սուրբն Գրիգոր
«յորժամ եկեալ է, առաքելոյն Նոմոս տեսեալ, ձեռագրով նոյն հաստա-
«տեալ, և զնովիւք ամրափակեալ. յամի տեառն ՊՃԻ. Եւ հինգ հասեալ
«լուսաւորչին պատճէն գրեալ արձանագրիս որ ասա եդաւ։

Սա ինչպէս երևեցաւ արձանագրութիւնից Էջմիածնայ Մայր տաճարից յետոյ երրորդն է, որ լուսաւորչի օրով կառուցեալ է. առաջինը 303 թուին Փրկչ. կաթուղիկէ Մայր տաճարն է կառուցուած, երկրորդն 305 թուին Սևանայ Ս. Յարութեան եկեղեցին, երրորդը Բարդուղիմէոս առաքելոյ ձեռամբ այժըմ մեզ յայտնի սոյն Թովմայ առաքելոյ վանքը 325 թուին Փրկչ. սոյն տաճարի հիւսիսային դրան վրայ քանդակուած կայ Պօղոս առաքելոյ արձանը մի ձեռին գաւազան և միւս ձեռին գիրք, որոյ ներքև դրան ճակատին սոյն վանքի միայն տաճարի նորոգութեան մասին արձանագրութիւնը երևում է այս օրինակ։

Թուականիս Հայկականի
Մի յորելեան իսկ շրջանի *)
Եռակ տասանց որով վարի
Սա կառուցաւ քառանկիւնի
Ձեռամբ Յովհան վարդապետի
Որ էր յաջորդ յայսմ գահի
Բազում ծախիւք անթուելի
Զորիւք ամօք սա կատարի
Երիւք դրամբ ըստ խորհրդի
Կամարակապ զարմանալի

Անուամբ մեծին սուրբ Թովմայի
Նման վերնոյն ընդ Սիօնի
Սա մեզ շնորհեաց պարքևարի
Զաստուածամուխ աչն ձրի
Ամուր պատուարք բոլոր թէմի
Պաշտօնէից իւր հովանի
Պարծանք է սա Գողթ գաւառի
Եւ ցնծութիւն Հայոց ազգի
Նպաստութեամբ տեառն Յիսուսի
Ի փառս անուան մի եռակի։

Այս տեղ հարաւային դրան վրայ և այլ տեղերում, գտնուում են և այլ մի քանի արձանագրութիւնք, որոց մէջ շինութեան օժանդակ եղող անձանց և ժամանակի իշխանաց անունները յիշուում են. սորա ևս տպեալ գոլով աւելորդ ենք համարում այս տեղ նշանակել։

---

*) Կամ գուցէ լինի յորելեան։

[illegible]



ԼԻՍԱՆԿԱՐ Ս. ՓԱՓԱՋԵԱՆՑ:

ՕՐԻՆԱԿԵԼԸ ԱՐԳԵԼՈՒԱԾ Է:

Худож.-Лит. Р. Шахбазянца въ Тифлисѣ.

Սակ երբ այցելուն մտնում է տաճարի մէջ, աւելի ևս հիանում է նորա հրաշալի պայծառութեան վրայ. կարողենք ասել համարձակ, որ ոչ մի տեղում նմանը չկայ, թէ-դուզ Էջմիածնայ տաճարից սկսած մեծն Հայաստանում գտնուած մինչև ամենաառաջաւոր վանք, երբէք չէ ունեցել այն գեղեցկութիւնը, պայծառութիւնը, մաքրութիւնը, պատերի, առաստաղի զարդարանքները, խաչկալի հիանալի շինուածքը, ինչ ունի Թովմայ առաքելոյ վանքը, միով բանիւ ամենայն ինչ կատարեալ է, դեռ ևս մեր ճանապարհորդութեան մէջ մինչև օրս չ.յանդիպեց մեզ տեսնելու, Նախավկայի արտաքին տեսքի և սոյն վանքի տաճարի ներքին հիանալի գեղեցկութեան նմանը:

Յիրաւի արժանի է տեսնել իւրաքանչիւր Հայի, ինչու որ ամբողջ պատերը՝ կամարներից մօտաւորապէս 3 արշին ցածր՝ ներկուած է մարմարեայ քարի գոյնով, մնացածը՝ մինչև կամարները սպիտակ գոյնով, իսկ կամարները որպէս և ամբողջ առաստաղը զարդարուած են գեղեցիկ ոսկեզօծ՝ գոյն զգոյն ներկերով նկարուած արևելեան ճաշակով, պատկերներով, որոց իւրաքանչիւրը, եթէ առանձին առանձին վերցնենք մի մի խաչ ենք ստանում, և մասամբ փունջ փունջ կազմած գովեալ ծաղիկներ:

Իսկ կաթուղիկէի առաստաղը ներկուած է կապտագոյն իբրև երկինք, որի վրայ փայլում են ոսկեգոյն աստղերը, բեմի սիւների գլխին չորս անկիւնում երևում են թևատարած չորս հրեշտակներ:

Ունի մի աւագ սեղան միայն, որի երկնագոյն ոսկեզօծ սիւներն և այլ և այլ զարդարանքներ ունեցող փայտաշէն խաչկալը մի նուրբ, մաքուր և գեղեցիկ գործ է, խաչկալի ամենածայրում աչքի է ընկնում Ս· Խաչը, որի վրայ նկարուած է թեւատարած Փրկիչը, երկու կողմերում հրեշտակներ, որոց մինը ձեռքին բռնած ունի սկիհ, միւսը օրինաց տախտակները:

Խաչկալի աջ դրան գլխին կայ նոր ուխտի նշանը, մի կողմում Ս· աւետարանն, մէջ տեղն սկիհ, միւս կողմում Ս· խաչ, տակը Վ՝ակաս:

Ձախ կողմի դրան վրայ հին ուխտի նշանը, մի կողմը պատուիրանաց տախտակները, մէջ տեղում խաչաձև գաւազանը օձը վրան բարձրացած, միւս կողմը սաղաւարդ, որանց տակը նոյնպէս Վ՝ակաս:

Սեղանի առաստաղը ներկայացնում է կապոյտ երկինք հանդերձ աստղերով, իսկ խաչկալի ամենածայրում Փրկչի խաչափայտի ուղիղ գագաթին փայլում է ճաճանչաւոր արեգակը առաստաղի վրայ:

Ռեմի առաջը բարձրացած է մարմարեայ քարով, որոնց իւրաքանչիւրի երկարութիւնն է մօտ 2 արշին, իսկ լայնութիւնը 1 արշին, բոլոր քարերի վերին մասերում փորագրուած և ներկուած է գեղեցիկ գոյն զգոյն նկարներ, վերջին երկու ծայրերում մարմարեայ քարերի վրայ, աստիճանների տակ՝ փորագրուած է Ս· Ստեփաննոս Նախավկայի պատկերը սարգաւակի զգեստով:





Սրբոյն Յովհաննու Մկրտչի

Լաւագ սեղանի աջ և ձախ կողմերում կայ մի մի աւանդատուն, աջ կողմի աւանդատնից մի ճանապարհ, որ բարձրանում է սանդուղներով տաճարի վերնատունն ու տանիքը, այս տեղ է և եկեղեցական զգեստուց խորանը և գրադարանը, որ հին թէ տպեալ և թէ մագաղաթեայ ձեռագիր գրքեր ունի, իսկ ձախակողմի աւանդատանն, որ կոչուում է Թանգարան, կան բազմաթիւ սրբոց նշխարներ, որոց մէջն է Թովմայ առաքելոյ և Յակոբայ Հայրապետի աջերը ոսկեջրած և ականակուռ զարդարուած, Կենաց փայտի մասունքը, մի տախտակ տապանաձև, որոյ մէջ գտնուում է Գայեանեանց մասունքը. շատ և շատ խաչեր կան ոսկեջրած և արծաթապատ, որոց՝ մասունքների մասին յիշատակարաններ չունենալուն մեզ անյայտ մնացին:

Ի միջի այլոց կայ նաև մի արծաթեայ չեփտիշի գործուած տապանակ ուխտի որոյ մի գմբեթը պակաս է:

Թովմայ առաքելոյ աջն մի ձեռագիր թուղթ յիշատակարան ունի կաթուղիկոսական կնքով կպցրած, որ Եփրեմ կաթուղիկոսի գրածն է, և որ այս աջը մի ժամանակ Էջմիածնումն է եղել գտնուելիս և այժմ կրկին նուիրում է Թովմայ առաքելոյ վանքին. նոյնութեամբ օրինակում ենք այս տեղ նոյն յիշատակարանը:

« Սուրբ աջս Սրբոյն Թովմայի առաքելոյն ի քանի ամաց հետէ տարա-
« գիր գոլով ըստ բերման ժամանակին, և մնացեալ ի սուրբ աթոռս այժմ
« ըստ խնդրոյ գերյարգի մահտեսի և մայրտեսի աղա պապային հախու-
« մեան, առաքեցաք ի տեղին իւր ի հրաշալի վանս սրբոյն Թումայի առա-
« քելոյն որ Ադուլիս։

1821 յամի տեառն ի 28 Յունիսի

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎՃՏԱԼԻ ԵՓՐԵՄ.

Կան նաև սոյն Թանգարանում զանազան թուա-

կանների հարուստ և գեղեցիկ զգեստներ եպիսկոպոսական և վարդապետական, թանգագին թագեր, վակասներ, փորուրարներ, եմիփորոններ, բազպաններ, գօտիք, և այլն շատ զգեստներ սիրուն և հիանալի ձեռագործ, որոնք ինչպէս իրենց վրայ կրող յիշատակարաններից հասկացուում է, Պօլսից և հնդկաստանից բերուած են, բոլորը ոսկեթել և մարգարտաշար բանուածքներով, կանաչ, ապիտակ և վարդագոյն աղլաս կտորների վրայ, խորհրդաւոր պատկերներով։

Մի փորուրարի վրայ Յակոբ Նահապետի նկարն է, որից սերած 12 որդիքը շարէշար կարգաւ դասաւորուած են ծառի ճիւղերի վրայ, իւրաքանչիւրի անունները գրած է, որանցից վերևը Աստուածամայրը երկու կողքին հրեշտակներ։

Այս պանչելի ձեռագործը Պօլսոյ գործ է սոյն արձանագրութեամբ։

« Յիշատակ է ուրարս Վզիրխան *) եղեալ վաճառականաց ի դուռն Սուրբ
« Թումայի առաքելոյն ի վայելումն Յովհաննէս վարդապետին թվ. ՌՃՁ.

Մի եմիփորոն կանաչ աղլաղի վրայ կլապիտօնով բանուած սիրուն ծաղիկներ, ծաղկանց միջին դասաւորուած են չորս աւետարանչաց պատկերները առանձին առանձին մարգարիտներով բանուած, հնդկաստանի գործ. նոյնպէս մի այլ փորուրար, որոյ վրայ ոսկեթել բանուած է Էջմիածնայ պատկերը։

Մի վակասի յիշատակարանը այս է։

« Յիշատակ է Պետրոս վարդապետին ի վայելումն նորին աշակերտ Մատ-
« թէոս վարդապետին ի դուռն Թումայի (ՌՄԽԶ.)

Շատ և շատ զգեստներ կային, որոնք բոլորը միջին թւով 200-250 տարուայ ձեռագործներ են, մենք միայն մի քանիսներն նկարելով գեղեղում ենք գրքումս ի տես յարգելի հայրենասէրների։

---

*) Վեզիր խան՝ Պօլսոյ պանդոկներից մին է։





349 ԱԳՈՒԼԵԱՑ ՎԱՆՔԻ ԴՐԱՆ ՎՐԱՑԻ ՔԱՆԴԱԿԸ

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԴԱՅԻՆ ՄԱՍՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՊՈՂՈՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Այս տեղ գտնվում ենք Խոր վիրապի եկեղեցւոյ երկու նկարներն, որ գտնուում է Արտաշատում, Երասխ գետի ձախ կողմում դաշտի մէջ կղզեանման մի բլրոյ վրայ հաստատուած. Երևանայ և հին Նախիջևանայ խճուղու ճանապարհի վրայ, Երևանից դէպի հարաւ 2½ փոշտային ինչևան հեռու, հասարակ քարերով պարապատատ, որոյ անկիւններում կանգնեցրած են մի մի հաստատուն աշտարակներ:

Պարապի արևելեան մեծ դարպասի դռնից ներս մտնելիս, փոքրիկ բակի մէջ տեղ ապառաժ ժայռերի վրայ մեծ եկեղեցին է կանգնեցրած, մաքուր սրբատաշ քարերով:

Բակի բոլորտիքը, բացի հիւսիսային կողմից, շինութիւններ են կանգնեցրած, որոց մի մասը փայտեայ և ցխաշաղախ են ու խարխուլ, և մի մասը, որ է արևմտեան կողմը, կամարակապ քարուկիր շինութիւններ են, ուր մառանը և ամբարն է. հիւսիսային կողմը պարիսպն է:

Այս տեղ էլ վաղ ժամանակ շինութիւններ է եղած, բայց այժմ միայն հիմքերն են նշմարուում, այս կողմից էլ փոքրիկ դուռ ունի պարիսպը, որ տանում է դէպի բլուրի գագաթը՝ ժայռի վրայ:

Սոյն ժայռերի մէջ աչքի է ընկնում մի մեծ ժայռ, որոյ վրայ երկու քառաթև խաչի նշաններ են դրոշմուած, աւանդութեամբ օրհնաց խաչ են անուանում սոցա, սոքա ձևացրել են ինչպէս աւանդութեամբ ընդունուած է, Թարդուղիմէոս և Յուդա Թադէոս առաքեալները, երբ միմեանց հանդիպել և դիշերել են այս տեղ ժայռում, և դրոշմելով զայն նշան անուանել են օթեաց խաչ, այժմ սոյն ժայռի գլուխը առանձին հասարակ քարերից մի շինութեամբ ծածկուած է:

Վիրապը ընկնում է պարապի հարաւ արևմտեան անկիւնում, որոյ վրայ կառուցուած է օրօրոցաձև

փոքրիկ մի մատուռ սրբատաշ քարերից, և է ներքին կողմն սորա անսիւն։

Վիրապն՝ որ մի ժամանակ չարագործների և մահապարտների համար պատժատեղի էր և ուր լուսաւորիչ Հայրն մեր տասն և երեք տարի մնացած է։ ընկնում է այս եկեղեցւոյ ճիշտ սեղանի բեմի ներքև, որոյ մուտքը լինում է սորա հարաւային աստիճանների առաջից, որ ամրացրած է մի փոքրիկ դռնով, վիրապն ոչ այնքան խոր է, ինչպէս գրում է Ագաթանգ.

«արդ՝ իբրև այնմ ևս հասանէր թագաւորն (Տրդատ) ի վերայ իրացն՝ թէ
«արդարև որդի Անակայ Պարթևի է՝ որ սպան իսկ զԽոսրով Հայրն նորա,
«հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռամբք և կապեալ պարանո-
«ցաւ խաղացուցանել զնա Ցայրարատ դաշտ և տալ զնա ի գրեակն բեր-
«դին Արտաշատ քաղաքի և իջուցանել զնա ի վիրապն ի ներքին՝ որ ա-
«հնարին էր խորութեամբ . . . .

Այժմ հազիւ կլինի սորա խորութիւնը 20 կանգուն և լայնութիւնը 1½ կանգուն. ուղղահայեաց մի սանդուղ է դրուած 24 աստիճաններով, որով իջնում և բարձրանում են։

Այս ևս նորոգութիւն է ունեցել ինչպէս Ուռ-թիւ կրող մի արձանագիր այն տեղ յիշատակում է։

Ս. Գրիգոր լուսաւորիչ վիրապէն դուրս գալուց և հայաստան աշխարհը լուսաւորելուց յետոյ, ի հարկէ հաւատացեալների կողմից այդ տեղ պատուել էր հարկաւոր, ինչպէս ուրիշ սրբատեղերն նոյնպէս և այս տեղ կառուցուել է եկեղեցի, որ յետոյ պարսից Շապուհ Բ. թագաւորի զօրքերը այս կողմերը գտնուած եկեղեցիներն կործանելիս՝ սա ևս կործանեցին, որ յետոյ Վահան Մամիկոնեանը կրկին նորոգեց, այս ևս դարերի ընթացքում չի դիմանալով Ներսէս Գ. շինողի բակում գտնուած վերոյիշեալ եկեղեցին կառուցանելիս, շինում է նաև սոյն մատուռը, բայց սա ևս երկար հաստատութիւն չունեցաւ և յայտնի էլ չէ, թէ ուրիշ նորոգումներ ունեցել է թէ ոչ, որովհետև ոչ մի արձանագրութիւն չի երևում, բայց վերջի ժամանակների, այն է 1695 Փրկչական թուականի մի արձանագրութիւնից, որ Տփխիսեցի Դա-

ห้องสมุดกรมวิชาการ
กรมวิชาการ กระทรวงศึกษาธิการ
ถนนราชดำเนินนอก กทม. ๑๐๒๐๓

ԵՂԻԱՅԱՆՈՎ ՍՓՅՈՒՌՔԻ

ւիթ վարդապետի անունն է կրում և որ նորգել է այն. սոյն արձանագրութիւնն, որը գտնուում է վերապի վրայի մատրան հիւսիսային կողմը պատին ագուցած մի քարի վրայ է։

Ի տապանի սստ ամիրոփի
Մարմրն Դաւիթ վարդապետի
Որ էր վարուք առաքինի
Կենօք մաքուր բարուք բարի
Մեծահաւատ քաջ և արի
Խոնարհամիտ հեզահոգի
Ազնուատոհմ յազգէ Վրացի
Սնեալ ի սուրբ Էջմիածնի
Շինող, հիմնող սրբոյ ուխտիս
Եւ նորոգող սրբոյ վանիցս
Եկեղեցեացս և պարսպիս՝
Կենդանաթաղ գերեզմանիս

Լուսաւորչին մերոյ ազգիս՝
Որ վճարեաց զկանս աշխարհիս.
Վերափոխեալ ի յերկնայինս՝
Ի Հայկական թուականին.
ՌՃԽ. և Դ. ամին՝
Որ զօրէնի կիւրակէին.
Փետրվարի Ժ. երրորդին՝
Որք վայելէք յարդիւնս սորին,
Զսա յիշեսջիք առ ի բարին՝
Ի ժամ սրբոյ պատարագին.
Ցաղօթս և յերգս Աստուածային։

Սոյն մատրան արևմտեան կողմը՝ դրան կողքին մի գետնափոր տեղ, կայ մի գերեզման. որ հայր Ա. Զամչեան բ. հատոր երես 360 նայելով, Ներսէս Դ. կաթուղիկոսի գերեզմանն է։

Իսկ բակի մէջ գտնուած մեծ եկեղեցին, ուր ամենօրեայ ժամասացութիւնն է կատարուում. ունի մի պատարագամատոյց սեղան, որոյ երկու կողքին մի մի աւանդատուն ունի, եկեղեցւոյ առաջը դանդակատան չորս սիւներն միայն կան. եկեղեցւոյ արտաքին կողմը լուսամուտից վերև կայ մի ճաքուած քարի վրայ քանդակագործ մի նկար, որ ներկայացնում է, Ս. Դ. լուսաւորիչը զգեստաւորուած կանգնած և օրհնում է իրեն երկրպագող Տրդատ թագաւորին. սոցանից ուրիշ և երկու կանայք, որոց ներքև կայ շատ դժուար ընթեռնելի տառերով գրուածք. այսպէս։

« Տրդատ թագաւոր Աշխէն և սպասաւորք Խորվիրապայ թաղեալ 321 թիւ.

բայց որտեղ է այդ գերեզմանը ոչ ոք չէ իմանում։

[7n.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0080510

ЦЕНА
Инв. №
958